

Հայաստանի Հանրապետության  
գիտությունների ազգային ակադեմիա

Միջազգային գիտաժողով

# Հայաստանը և Քրիստոնյա Արևելքը



ԶԵԿՈՒԾՈՒՄՆԵՐԻ ԴՐՈՒՅԹՆԵՐ



Երևան 1998





947.925



ՍԻԶԱԶԳԱՅԻՆ ԳԻՏՈՒՊՈՎ

# ՀԱՅԱՍՏԱՆ ԵՎ ՔՐԻՍՏՈՆՅԱ ԱՐԵՎԵԼՔԸ

Երևան, 15-18 սեպտեմբերի, 1998

ԶԵԿՈՒՑՈՒՄՆԵՐԻ ԴՐՈՒՅԹՆԵՐ

A  
185054

Հայաստանի Հանրապետության  
գիտությունների ազգային ակադեմիա

Հայաստանի ՅՈՒՆԵՍԿՕ-ի գործերով  
ազգային հանձնաժողով

Սատելիտարան

Երևանի պետական համալսարան

ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ - 1998

Խմբագրությամբ՝

**ակադ. Գ. Խ. ՍԱՐԳՍՅԱՆԻ**

պ.գ.դ. Պ. Մ. ՄՈՒՐԱԴՅԱՆԻ

պ.գ.դ. Ա. Ա. ԲՈԶՈՅԱՆԻ

# INTERNATIONAL CONFERENCE ARMENIA AND CHRISTIAN ORIENT

Yerevan, 15-18 september, 1998

## THESIS OF REPORTS

Հ 0503020200  
703(02)-98

© ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ, 1998

## ՅՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՅՐԱՎԱՆԵՑԻՆ ՎԵՐԱԳՆԱՀԱՏՈՒԹ

Ներկայ խօսքին նպատակն է վերաբերել Թէոդորոս Քոքենատրի վարկաբեկիչ գրութիւնը ընդդեմ Յովհաննես Մայրավանեցիին, զոր վերակոշած են Մայրագոմեցի՝ վարկաբեկելու համար զայն, Եզր կաթողիկոսի նկատմամբ իր արտայայտած վերապահութեան և քննադատութեան հետևանքով:

Նոր տեղեկութիւններ գտնուած են ձեռագրի մը մեջ, որոնք լոյս կը-սպոն Մայրավանեցիի մասին, անոր հեռանալէն ետք Կաթողիկոսարա-նէն: Պիտի ներկայացնենք այդ տեղեկությիւնները, որոնք կը հակադրուին Քոքենատրի քննադատութեան:

Աննա Արևշատյան /Երևան/

## ՀԱՅ ՄԻԶԱԴԱՐՅԱՆ «ԶԱՅՆԻՑ» ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՄՈՎՍԵՍ ՍՅՈՒՆԵՑՈՒ «ՅԱՂԱԳՍ ԿԱՐԳԱՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ» ԳՐՎԱԾՔԸ

Մովսես Սյունեցու «Յաղագս կարգաց եկեղեցւոյ» երկասիրությունը /իրատ. Ն. Թահմիզյանի, «Լրաբեր», 1972, 11, էջ 91 - 93/ հայոց եկեղեցա-կան ձայնեղանակներին նվիրված ամենավաղ գրավոր աղբյուրներից է: Նրանում առաջին անգամ տրված է հայկական ութձայն համակարգի նո-րովի իմաստավորված ամբողջական նկարագրությունը և գեղագիտական մեկնությունը:

Ի տարբերություն նախորդ շրջանին հատուկ ձայնեղանակների ուս-մունքին վերաբերող դրույթների, որոնք պահպանել էին աշխարհիկ երաժշտական տեսության և գեղագիտական մնացուկներ, Մովսես Սյու-նեցու մեկնությունը ներկայացնում է զուտ եկեղեցական տեսության և գե-ղագիտության մի նմուշ: Այստեղ հեթանոսական առասպելախսառն պատ-կերացումներին գալիս է փոխարինելու քրիստոսաբանական, վախճանա-բանական աշխարհընկալումը, որի ակունքները որոնելի են, մասնավորա-պես, Հովհաննես Ավետարանչի հայտնության և Աստվածածնի պարա-կանոն տեսիլքի համապատասխան հատվածներում: Մովսես Սյունեցու երկասիրությունը հատկանշվում է հայրաբանական և արեոպագիտյան գրականության ազդեցությամբ:

Մեկնության մեջ հստակորեն զատորոշված 4 բուն, 4 կողմ և 2 ստեղի

ձայնեղանակները ստանում են իրենց աստվածաբանական լուսաբանումը, այնուհետև՝ բնորոշվում ըստ իրենց զգայական-էթիկական բնույթի, միաժամանակ նշվում է ժամերգության մեջ կատարվող ընդհանրացված երգասացությունների պատկանությունը այս կամ այն եղանակին: Երկրորդ հատվածն, ըստ Էռթյան, Սաղմոսի մեկնությունն է:

‘Ուստեղով երկասիրության խորագրից և ենթախորագրից, կարելի է եզրակացնել, որ Մովսես Սյունեցու «Յաղագս կարգաց եկեղեցոյ» -ն պաշտոներգության տարբեր /ծիսական, գեղագիտական, երաժշտատեսական և գործնական/ հարցերը շոշափող ծավալուն մեկնողական բնույթի երկասիրության պահպանված մի հատվածն է, որը մեծ ազդեցություն է քողել հետագա դարերի հայ երաժշտագեղագիտական մտքի վրա:

Ազատ Բողոքան /Երևան/

## ԱՆՏԻՈՔԻ ՊԱՏՐԻԱՐքԱԿԱՆ ԱԹՈՌԸ ԵՎ ԺԲ ԴԱՐԻ ԶՐԻՍՈՆՅԱ ԱՐԵՎԵԼՔԻ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

‘Ի դարի սկզբից Հռոմեական կայսրության տարածքում ձևավորվում էր եկեղեցական նվիրապետական կառույցը: Արդեն նույն դարի վերջին ստեղծվեց հինգ պատրիարքական աթոռ /Հռոմ, Կոստանդնուպոլիս, Անտիոք, Ալեքսանդրիա, Երուսաղեմ/, որոնց իշխանության սահմանները հիմնականում համընկնում էին Հռոմեական կայսրության վարչական բաժանումների հետ: Հայոց եկեղեցին այդ շրջանում ենթակա էր Կապաղովկիայի արքեպիսկոպոսական աթոռին, ուր իրենց ձեռնադրությունն էին ստանում Հայաստանի առաջին եպիսկոպոսապետերը:

Ե դարի ընթացքում իրավիճակը հետզիետե փոխվեց. 410թ. Սելևկիակատեսիֆոնի ժողովից հետո, Հռոմեական եկեղեցուն հար և նման կառույց առաջացավ Սասանյան Պարսկաստանում, որն աստիճանաբար անցավ նեստորականների ձեռքը: Միևնույն ժամանակ՝ Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև բաժանված Հայոց եկեղեցին ամրապնդեց իր ինքնավարությունը և, անջատվելով Կապաղովկիայի աթոռից, սեփական ժողովներում սկսեց ընտրել և ձեռնադրել իր կաթողիկոսներին: Վավերագրով փաստված այդ ժողովներից առաջինը տեղի ունեցավ 444թ. Շահապիվանում:

Հայոց եկեղեցու անկախացման գործում իր դերը կատարեց նաև Սասանյան Պարսկաստանը /նրա տիրապետության ներքո եկեղեցին ամրապնդեց ինքնավարությունը՝ զատված կայսրության համանման կազմակերպությունից/: Իրավիճակի նման զարգացման գործում իր դերն ու-

նեցավ Զաղկեդոնի ժողովը, որի երկարնակ որոշումներին հակառակ լեցին Արևելքի կարևորագույն եկեղեցական աթոռներից /Ալեքսանդրիայի, Երուսաղեմի և Անտիոքի պատրիարքներին ենթակա թեմեր/ շատերը: Այս տարածքներում ծևավորվեցին հակաքաղկեդոնական եկեղեցական կառույցներ:

Հայոց եկեղեցին ևս, որի կաթողիկոսական նստավայրը գտնվում էր Սասանյան Պարսկաստանի սահմաններում /սկզբում Վաղարշապատ, այնուհետև՝ Դվին/, հակադրվեց թե՝ Բյուզանդիայում տիրապետող վարդապետությանը, թե՝ նեստորական Պարսից եկեղեցուն, այս երկուսի գաղափարական ակունքները նույնը համարելով, ուստի տարօրինակ չե, որ Զակեդոնի ժողովի որոշումները մուծված են Կտեսիֆոն-Սելևկիայի եկեղեցական կազմակերպության Կանոնադիրք:

Չ-Ը դարերի բյուզանդապարսկական և բյուզանդապարական պատերազմների դարաշրջանում թեպետ Բյուզանդական կայսրությունը բավական երկար ժամանակ վիրձեց Հայոց եկեղեցական կազմակերպությունը հպատակեցնել Կոստանդնուպոլսի աթոռին, սակայն այդ քաղաքականությունը պատուիներ չտվեց, քանի որ Հայոց եկեղեցու ներսում ծևավորված հիմնական հոսանքներն ընդդիմանում էին կայսերական քաղաքականությանը, իսկ Հովհաննես Օձնեցու գահակալությունից սկսած, Հայոց եկեղեցին բացահայտորեն ընտրեց հակաքաղկեդոնականություն, այսինքն՝ Բյուզանդական եկեղեցու դավանությանն ու կառույցին հակադրվելու ճանապարհը: Այս քաղաքականության իրականացման ոլորաններում Հայոց եկեղեցու կողքին հաճախ հայտնվում է Անտիոքի հակոբիկ ասորիների պատրիարքությունը:

Չնայած Հայոց կաթողիկոսարանի բուռն գործունեությանը, մինչև Ը դարը հայ մատենագրությանը հայտնի չե որևէ աշխատություն, որը համապարփակ պատկերացում տար տիեզերական եկեղեցու նվիրապետական կառույցի և նրանում Հայոց եկեղեցու տեղի վերաբերյալ: ՏՇ դարից մեզ են հասել այդ նյութին վերաբերող առաջին ինքնուրույն երկերը, որոնց նպատակն էր ցույց տալ Հայոց եկեղեցական կառույցի ամբողջականությունը, նրա տեղը Տիեզերական եկեղեցու նվիրապետության համակարգում: Այսուհանդերձ, ԺԲ դարում, կապված հայ-բյուզանդական եկեղեցական բանակցությունների նոր փուլի և Մերձավոր արևելքում ստեղծված եկեղեցա-քաղաքական նոր իրադրության հետ, Ներսէս Լամբրոնացին և նրան համախոհ կիլիկյան հոգևորականությունը փորձ է կատարում փոխել Հայոց եկեղեցու կարգավիճակը Տիեզերական եկեղեցու նվիրապետության մեջ, Բյուզանդական կայսրությանն առաջարկում է հայոց եկեղեցին վելանվանել Անտիոքի պատրիարքական արք: Նման մտայնության ծևավորման խնդրում կարևորվում էր նաև այն հանգամանքը, որ ողջ

ԺԲ դարի ընթացքում Անտիոքի պատրիարքությունը գայթակղության քար էր դարձել Բյուզանդիայի և Հռոմի Եկեղեցական փոխարարներություններում։ Ներսես Լամբրոնացու նավատակն էր այդ խնդիրը հայոց Եկեղեցու օգտին լուծելու ճանապարհով։ Մերձավոր Արևելքում հասնել Եկեղեցական խաղաղության։

Սուսաննա Գրիգորյան /Երևան/

## ՀԱՅԵՐՆ ԻԲՐԵՎ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ԱՎԱՆԴԱՊԱՀ ԺԱՌԱՆԳՈՐԾ

Հայ Եկեղեցու հետևորդների յուրաքանչյուր սերունդ հավատարմություն է դրսելորել ի սկզբանե ծևավորված, ապա բազմաթիվ փորձությունների դիմակայած և կատարելության հասած գաղափարախոսական հիմքի նկատմամբ։

Ի լրումն տիեզերական ժողովների, հետագայում Հայոց Եկեղեցին շարունակում է ինքնամաքրման աշխատանքները՝ անաղարտ պահելով ստացած ժառանգությունը։ Յուրաքանչյուր նոր ժողով հաստատում է հավատարմությունը միևնույն և միակ գաղափարախոսության նկատմամբ և իր հերթին հանդես գալիս «ընդդեմ Եկամուտ քուլութեանցն» (Գրիգոր Տարեացի, Գիրք հարցմանց, Կ. Պոլիս, 1729, էջ 544):

Ըստ Գրիգոր Տարեացու՝ «Ազգս հայոց ունի զառաւել ճշմարտութիւն և զառաւել բարին ի դաւանութիւնն և ի կարգս, այսինքն ի հաւատս և ի գործս։ Ապա ուրեմն՝ պարտի ամենայն ազգք քրիստոնեաց սորա հետևիլ» (նույնը, էջ 550)։ Այսօր կարող է օտար աչքին նա չափազանց գնահատական երևալ, սակայն վարքագծի և հոգեբանության կողքին սրա հավատումն է նաև հայերենի բառագանձը, որի բազմերանգ և բազմաբնույթ մի շերտ քրիստոնեական աշխարհներներուն արգասիք է։ Բերենք բազմաթիվ օրինակներից միայն մի փոքր շարք, որի հիմքում «օրինութիւն» իմաստն է։ բառաշարքի մի մասը կյանքի է կոչվել առաջին իսկ քրիստոնեական երկերի թարգմանությամբ, իսկ մնացյալը ավելի հետին դարերի ծնունդ է։ Մյուս կողմից՝ հատկապես այս բառաշարքն է բերվում նկատի առնելով, որ այդ բառերը կամ բառաբարդումները հիմնականում վրիպել են բառարանագիրների ուշադրությունից և այդ իմաստով, փաստորեն, շարքը համալրում է վերոնշյալ իմաստային դաշտը (հողօրինեք, մատադորինեք, մայրօրինեք, սերմնօրինեք, ջրօրինեք, երեցօրինեք, աղօրինեք)։

## ՀԱՍՏԱՏՈՒԵԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՄԻԱՍՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԽԱԶԱԿՐԱՑ ՇԱՐԺՄԱՆ ՄԵՋ

1. Խաչակրաց շարժման գաղափարախոսության ձևավորումն ընթացավ Երկու տարբեր դիրքորոշումների բախումից, որոնցից առաջինը նպատակառության էր Հռոմի պապերի գերակայությամբ համաքրիստոնեական միասնության հաստատմանը, Երկրորդը՝ բյուզանդական և, ընդհանրապես, արևելաքրիստոնեական հզորության բեկորների վրա արևմտյան իշխանությունների ստեղծմանը: Երկու սկզբունքների հակասական և ներդաշնակ փոխհարաբերություններով պայմանավորվեց Խաչակրաց շարժման ողջ էությունը, նրա տպավորիչ հաջողություններն ու ողբերգական ձախողումները:

2. Անդրծովյան քրիստոնյաներին ուղղմական օգնություն ցուցաբերելու և նրանց ճշմարիտ հավատին վերադարձնելու խնդիրներն առաջացան միաժամանակ և միևնույն կոնտեքստում Գրիգորիոս VII պապի և Սիքայել VII-ի հարաբերությունների շրջանակում: Հռոմի պապերն ու բյուզանդական կայսրերը քրիստոնեական աշխարհի եքելու ամենահզոր, ապա ամենատիտղոսավոր ներկայացուցիչներն էին: Այս նմանությունն ավելի հետաքրքիր էր ուրվագծվում նրանց քեռկրատական հավակնությունների տարբերությունների առկայության պայմաններում: Եքել Հռոմի պապը, ունենալով հսկայական հոգեոր իշխանություն, ծզտում էր այն իրագործել աշխարհիկ տիրապետության մակարդակում, ապա բյուզանդական կայսրը, վայելելով անսահմանափակ միապետի իրավունքները, հավակնում էր հոգեոր քարձրագույն իշխանության: Ցանկալի մեկնակետերից միմյանց ազդեցության ոլորտներում մրցակցող պապն ու կայսրը քաղաքական և հոգեոր սակարկության զգալի պաշարներ ունեին, որոնք տարբեր հաջողությամբ շահարկեցին մինչև 1453 թ-ի մայիսի 29-ը:

3. Ժամանակից պատմագրության մեջ մեծ սխիզմա հասկացողությունը միանշանակորեն կապվում է 1054թ. դեպքերի հետ, երբ պապի անունը դուրս բերվեց օրթոդոքս Եկեղեցու դիպնիքտից: Սակայն Խաչակրաց դարաշրջանի գործիչները չեին կարծում, որ այս իրադարձությամբ հարստացված կրոնական վեճերն անշրջելի հետևանք են ունեցել Արևմտյան և Արևելյան Եկեղեցիների միասնության համար: Եկեղեցիների բաժանումը մի երկարատև պրոցես էր, որն իր զարգացման տարբեր փուլերում զանազան ձևեր էր ընդունում: Հույն-լատինական հակասությունների հիմնական հւերցը պապական գերիշխանության խնդիրն է..., որը միայն դավանաբանական պրոբլեմ չէր: Ի տարբերություն արևելյան մյուս քրիստոնյա-

ների, Հոռմը հույսներին չեր դասում հերետիկոսների շարքը նրանց համարելով առաքելական հավատի միակ հետևողներն Արևելքում:

4. Չաղկեղոնի տիեզերաժողովից հետո, երբ ողջ Արևելքը փաստացիորեն հանձնվեց Կոստանդնուպոլսի պատրիարքությանը, պապականությունը գրեթե չ. առնվում Արևելքում տեղի ունեցող իրադարձություններին: Բոլոր արևելյանները միանշանակորեն համարվում էին հերձվածողներ, իսկ նրան աշխարհիտ հավատին վերադարձնելու խնդիրը Կոստանդնուպոլսի պատրիարքի հոգածության առարկան էր: Խաչակրած շարժման նախօրեին պապականությունը փորձում էր իր կրոնական և քաղաքական ազդեցությունը տարածել շատ ավելի հեռու, քան օրթոդոքս քաղաքակրթությունն էր: Գրիգորիոս VII-ը պատրաստվում էր «դարձի» բերել բոլոր Արևելյան քրիստոնյաներին, իրավացիորեն ենթադրելով, որ նրանց միջև չհարթվող կրոնական հակասությունները միայն կարդարացնեն գերազույն դատավորի կեցվածք ընդունելու առաքելական աթոռի նկրտումները: Այս քաղաքականության մեջ հայերն իրենց մշակութային և քաղաքական կենսունակությամբ առանձնահատուկ տեղ էին զբաղեցնում: Օրթոդոքս եկեղեցու հետ նրանց դարավոր մրցակցությունը, իսլամական էքսպանսիային դիմադրելու կամքը հայերի հետ համագործակցելու կարևոր հեռանկարներ էին բացում պապականության առջև:

5. Համաքրիստոնեական միասնության պապական պատկերացումները զգալիորեն արտացոլվեցին նախկին Բյուզանդական Իտալիայում առաքելական աթոռի կրոնական քաղաքականության մեջ: Պապականության համար Հարավային Իտալիայի հունական հոգևորականության հետ բնականոն հարաբերությունների մշակումը, Լատինական եկեղեցու կառուցվածքում նրա ներդաշնակորեն ներգրավումը խիստ կարևոր էր, քանի որ սովորական հոգեորսից բացի, Հարավային Իտալիան այն փորձադաշտն էր, որտեղ մշակվում էր համաքրիստոնեական միասնության պապական մոդելը: Համապատասխան լատինական ներկայության դեպքում, կտարածվե՞ր այն արդյոք Արևելքում, կախված էր նրանից, թե որքան ավելի ճկուն և հանդուրժողական կլիներ այդ մոդելը, որպեսզի համապատասխանեցվեր Արևելյան քրիստոնյաների հոգևոր և աշխարհիկ իշխանությունների չափերին:

6. Համաքրիստոնեական եկեղեցական միասնության խնդիրը Խաչակրաց արշավանքի հիմնավորման մեջ Գրիգորիոս VII-ի և Ուրբանոս II-ի կողմից արծարծվեց տարբեր շեշտադրումներով: Եթե Գրիգորիոս VII-ը արշավանքի կայացման գործում կարևորում էր Հոռմի հետ համաձայնություն որոնելու Արևելյան եկեղեցիների պատրաստակամությունը, առաջ Ուրբանոս II-ն ընդիանրապես խոսափի: լով դավանարանական հարցերի շոշափումից, Արևելյան քրիստոնյաներին նույնացրեց խսրայելի

զավակների հետ, որոնց փրկության համար Աստված հաղթական մարտի պետք է նետի արևմտյան ասպետներից բաղկացած իր երկնային զորքը:

Եղուարդ Դանիելյան /Երևան /

## Ս. ԹԱԴԵՈՍ ԱՌԱՋՅԱԼԻ ԱՎԱՆԴՈՒԹՅԱՆ ՄՐՏԱՑՈԼՈՒՄԸ ՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵԶ

Հայոց եկեղեցու՝ Ս. Թադեոսի քարոզությամբ հիմնադրման ավանդությունը, գտնվելով քրիստոնեական վարքաբանության ակոնքներում, արտացոլվել է նաև պատմագրության մեջ: Այդ են վկայում Փավստոս Բուզանդի, Ազաթանգեղոսի և Մովսես Խորենացու հաղորդումները:

Ս. Թադեոսի ավանդությունը բովանդակող Ղերութնայի /Ղարութնիա / հեղինակությամբ հայտնի ասորերեն (III-IVդդ.) և հայերեն («Թուղթ Արգարու», թարգմ. Վդ.) տեքստերի պատմաբանասիրական հետազոտությունը կատարվել է Եվսեբիոս Կեսարացու (260-339) և Մովսես Խորենացու (Վդար) երկերի՝ ավանդությանը նվիրված բաժինների ընդգրկմամբ:

Եվսեբիոս Կեսարացին իր «Պատմութիւն եկեղեցւոյ» երկում ավանդությունը բովանդակող նյութը ասորերենից է. քայլումանել հունարեն: Համեմատությունը ցույց է տվել, որ Եվսեբիոսի պահապանած տեքստը իրենից ներկայացնում է ավանդության համառոտ տարբերակը: Մովսես Խորենացու շարադրանքը, պարունակելով ակզբանդրյուրային բնույթի որոշ մանրամասնություններ, տարբերվում է ասորերեն ընդարձակ խմբագրությունից, չնայած որ Պատմահայրը նշել է Ղերութնային որպես սկզբնադրյուրի հեղինակ (Մովսես Խորենացի, Բ.36): Ամենայն հավանականությամբ, այդ պայմանավորված էր ինչպես ծեռագրական խմբագրություններով, այնպես էլ՝ ավանդության հայկական բանավոր հիմքից ծագումով և օտար՝ ասորական միջավայրում մշակումով:

Մովսես Խորենացու երկում խնդրո առարկա հարցի առնչությամբ եղած մանրամասնությունները կարող են բացատրվել հետևյալ հանգամանքներով՝ ա. Եղեսիայի դիվանից նաև այլ նյութերի օգտագործում, բ. հայ բանահյուսության միջոցով՝ Առաքելական քարոզության ժամանակներում ձևավորված զրույցների իմացություն, որոնք հիմք հանդիսանալով Հայ եկեղեցու ավանդության համար, իրենց դրսետրումը գտան վկայաբանական ու վարքագրական երկերում («Վկայաբանութիւն և գիտ նշխարաց Ս. Թադէի Առաքելոյ և Սանդիստոյ կուսի»). կես՝ «Սովերք Հայկականք», նաև՝ «ճառընտիր»):

Ավանդության սկզբնադրյուրային հիմքի ուսումնասիրությունը մեզ

հնարավորություն է տվել Ս.Թադէոս և Ս.Բարթողիմեոս առաքյալների Հայաստանում ընթացած քարոզության ուղիները ներկայացնել քարտեզով: Հետազոտության քարտեզագրական մեթոդը նույնպես օգնում է ճշգրտորեն ներկայացնել Հայ եկեղեցու ավանդության պատմաաշխարհագրական հիմքը և Առաքելական ժազում ունեցող եպիսկոպոսական աթոռների աշխարհագրությունը պատկերող «Քրիստոսի եկեղեցու Տիեզերական քարտեզում» ներկայացնել «Վիճակ Թաղէի»՝ Հայոց երկիրը:

Լիլիթ Երնջակյան / Երևան/

## ՀԱՅԿԱԿԱՆ ՀՈԳԵՎՈՐ ՄՈՆՈԴԻԱՆԵՐԻ ԵՎ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԴԱՍԱԿԱՆ ՄԵՂԵԴԻՆԵՐԻ ՓՈԽԱՌԵՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայոց հոգևոր երաժշտության տարբեր ժանրերի /շարական, սաղմոս, հոգևոր մեղեղի և այլն/ կառուցվածքը և գրական բաղադրատարրը նրանց կամրջում է արևելաքրիստոնեական ավանդույթին, երաժշտական նյութի առումով դրանք սերտ աղերսների մեջ են նաև, այսպես կոչված, «համարելյան» կամ հաճախ «մահմեղական» անվանվող դասական մակամաթի արվեստի հետ:

Հիմքեր կան կարծելու, որ մակամաթի արվեստի ազգային տարբերակների կազմավորման և զարգացման առաջին փուլերը կապվում են միջնադարյան Իրանի երաժշտական մշակույթի հետ: Իրանական «ավագար»-ն /փոքր դաստղահների համակարգ/ ու «մակամաթը» հնուց ի վեր Արևելքում ընկալվել են որպես դասական, չափանմուշ օրինակներ: Հայունի է նաև, որ արևելյան երաժշտության լադային համակարգի ծեսվորման արմատները ծգվում են մինչև սասանյան մշակույթը, որի ազդեցության շրջանակում էր գտնվում նաև վաղ միջնադարյան Հայաստանի երաժշտական արվեստը: պատահական չէ, որ VIIդ. հայ երաժիշտ Սարգիսը հրավիրվել էր Տիգրոն՝ իրանական երաժշտության «արքայական»՝ «խոսրովային» լադերի կանոնավորմանը մասնակցելու:

Դարաշրջանի մշակութային խորքի վրա ծագած երաժշտական արվեստի կանոնացման միտումը ապահովելով նախորդ շրջանների ավանդույթի շարունակականությունը, միևնույն ժամանակ նպաստում էր արևելյան մշակույթների երաժշտական տեսակների ու սեռերի ծեսվորմանը նորմատիվ մտածողության դիրքերից: Ասվածի վկայությունն է հայկական եկեղեցական երաժշտության մեջ գործնական մշակում և խոր իմաստավորում ստացած «խոսրովային» ոճը, որի ակունքները մեզ տպնում են դեպի սասանյան ժամանակաշրջանը: Իր ստեղծագործության մեջ զար-

զացնելով այդ ոճը, Կաթողիկոս Ներսես Շնորհալին հաստատեց Երաժշտական արվեստի տարաբնույթ տեսակների փոխներթափանցման կենսունակությունը: Բազմաթիվ շարականներում նա օգտագործել է հայկական Ութձայնի երրորդ ծայնեղանակը՝ ԳՃ /արևելյան շարգահ լադի համարժեք/, որը հայոց Պատարագի գլուխիչ լույսող ծայներից է:

Հայոց հոգևոր Երգարվեստի ավանդական ժանրերը՝ արևելյան մեղենիների՝ առանձնապես թվային նշանակումներ ունեցող մուղամների /սեգահ, շարգահ/ հետ համեմատական կապի մեջ դիտարկելիս բացահայտվում են դրանց իիմնավոր նմանությունները ձևակառուցվածքային, լադախնտոնացիոն և, որ ավելի հետաքրքիր է, հուզական-հոգեքանական աշտահայտչածներում: Ասվածը հիմք է տալիս խոսել խնդրո առարկա լադերի, մասնավորապես; շարգահի առանձնահատուկ սեմատիկ հիմքի, նրանց բնութագրող ինտերվալներով պայմանավորված արտահայտչական երանգապնակի ինքնատիպության, պարտադիր - կանոնավորված, ավանդույթից-ավանդույթ տեղափոխվող ձևույթների պարունակած իմաստաբանական «կողի» մասին:

Ծոշափած շափացույցն առնչվում է մահմեղական աշխարհի տարբեր մշակութային շերտերում արտացոլված սուֆիական գաղափարների, կրոնական-միստիկ պատկերացումների, թվերի սիմվոլիկայի հետ, որոնք ցարդ անտեսված լինելով մակամաթի արվեստին նվիրված գրականության մեջ, մեր օրերում իրենց վրա են բեկորում մասնագնտների ուշադրությունը:

Անդրադարձը հայ հոգևոր մոնողիաների և արևելյան մակամների աղերսներին դրանց կրոնա-փիլիխոփայական մեկնաբանման հայեցակետից նոր հեռանկարներ է բացում ինչպես արևելքի Երաժշտական ավանդույթների հիմքում ընկած «նախակառույց» տարրերի բացահայտման /ձևակառուցվածքային մակարդակ/, այնպես էլ նյութի իմաստաբանական մակարդակը վկայող հոգևոր սուրբառատների ուսումնասիրության համար:

Ժողով Խաչատրյան /Երևան/

## ԱՐՏԱՉԱՏՐ ՀԵԹԱՆՈՍՈՒԹՅՈՒՆԻՑ ԶՐԻՍՈՆԵՈՒԹՅՈՒՆ

Արտաշատը կյանքի է կոչվել մ.թ.ա. 180-ական թթ. Արտաշիսյան արքայատան իիմնադիր Արտաշես Ա-ի կողմից որպես անկախ և միավորված Հայաստանի կրոնական կենտրոն: Արտաշատում էին գտնվում

Անահիտ-Արտեմիսի և Արեգ-Միկը-Ապոլոնի տառարները: Ինչպես հայտնի է, Գրիգոր Լուսավորչին ուղարկում են Արտաշատ, Անահիտի քանտը զցելու (Խոր Վիրապ): Նա ըմբուտացել էր ամենազոր Անահիտի դեմ և հենց այստեղից պետք է դուրս գար հաղթանակած (դա խորհրդանշում էր նոր կրոնի՝ քրիստոնեության հաղթանակը հեթանոսության դեմ) և քրիստոնեությունը տարածեր ողջ Երկրում: Գրավոր աղբյուրների համաձայն (Փ.Բուզանդ, Կորյուն, Մ.Խորենացի և այլք), քրիստոնեությունը 4-րդ դարում տակավին մեծ ժողովրդականություն չէր վայելում, ինչպես վերնախավի (Տիրան, Պապ թագավոր և այլն), այնպես էլ՝ հասարակ ժողովրդի մեջ: Այդ են հավաստում նաև Հայաստանում վերջին տասնամյակներին կատարված հնագիտական պեղումների արդյունքները (Արտաշատ, Վաղարշապատ, Կարմրաքար /Ախուրյանի շրջան/, Վարդաճոր, Լեռնակերտ, Քարանդի /Մարտունու շրջան/, Լոր գյուղ). հայտնաբերվել են 4-5-րդ դդ. դամբարաններ, սալարկղային, հողի կտրվածքում, կավե դագաղների մեջ կատարված թաղումներ, որոնք աղերսվում են հեթանոսական ավանդներին: Այդ շրջանում կողքի պառկած, ծնկները ծալած աճյունների հետ հանդիպում են մեջքի վրա պառկած կմախքներ, սակայն, դրանց ուղղվածությունը մեծ մասամբ արևմուտք-արևելք չէ: Արտաշատում, Վաղարշապատում և վերը նշված մյուս հնավայրերում ուղեկցող նյութերը հայտնաբերվում են դիակի հետ և դագաղը ծածկող կավե-քարե սալերի միջև եղած 10-15 սմ հողե լիցքի մեջ: Արտաշատում ուղեկցող մյուս իրերի հետ միասին հայտնաբերվել է նաև կնոջ ոսկե հետաքրքրական արձանիկ, որը պատկերում է Անահիտ աստվածուհուն:

Ուշագրավ է, որ քրիստոնեությունը պետական կրոն հոչակելուց հետո հեթանոսական և քրիստոնեական թաղումները կատարվել են նույն դամբարանաղաշտում: Հեթանոսական թաղումները հանդիպում են ոչ միայն երկրի ծայրագավառներում, այլև՝ Արտաշատ և Վաղարշապատ մայրաքաղաքներում, որոնք անմիջապես աղերս ունեն քրիստոնեության ընդունման հետ:

Տեղին է հիշատակել Փավստոս Բուզանդի այն վկայությունը (ԼԱ), որ Ներսեսի մահից հետո «... յորժամ զմեռեալսն լային, փողովք և փանդոք և վնօք զկոծսն պարուցն կաքաւելով զտիզսն հատեալս, զերեսս պատռեալս, արք և կանայք պղծութեամբ ճիւաղութեամբ պարուք դէմ ընդ դէմ հարկանելով, և կամ ափ հարկանելով, զմեռեալսն յուղարկէին»:

**ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԵՎ ԻՍԼԱՍՍԱԿԱՆ ՄԻՍԻՑԻՉԻՉՄԻ  
ԱՐՏԱՅՈԼՈՒՄԸ ՔՆԱՐԵՐԳՈՒԹՅԱՆ ՄԵԶ  
/ՆԱՐԵԿԱՑԻ - ՌՈՒՍԻ/**

Միստիցիզմը Արևելքն ու Արևմուտքը, մահմեղական և քրիստոնեական աշխարհները մերձեցնող եզրերից մեկն է, կրոնափիլիսոփայական աշխարհայացք, որ ուղեկցել է բոլոր համաշխարհային կրոններին:

Այն ծեավորվել է համապատասխան պետական կրոնների և Սուրբ գրքերի գետնի վրա: Միստիցիզմին մեծապես մերձակից է ասկետիզմը, որն իր յուրահատկություններն ու ավանդական տարրերն է ունեցել երկու աշխարհներում, ծեավորելով անապատականության, մենակեցության, ճգնակեցության /զոհովիյաթ/ ինստիտուտները:

Նեռալատոնականության, պանթեիզմի, գնոստիցիզմի, մազդահիզմի և այլ կրոնափիլիսոփայական գաղափարների փոխներթափանցումից ծեավորված քրիստոնեական միստիցիզմը և մահմեղական սուֆիզմը իրենց տարածումը գտան մշակութային աշխարհի տարբեր ոլորտներում՝ այդ թվում պոեզիայում: Վերջինիս լեզուն և ոճը ընդգծված արտաքին փոփոխություններ չկրեց, սակայն սովորական բանաստեղծական պատկերները դարձան կրոնական գաղափարների սիմվոլ, պոեզիա ներմուծվեց ինտելեկտուալ սկիզբ:

Քիստոնեական միստիկի և խլամ սուֆիի կողմից Աստծո հետ իռացիոնալ մերձեցման անհատական ճանապարհների որոնումը /թալաք/ այն առաջին աստիճաններից մեկն է, որը տիպաբանորեն ընդհանուր է: Ընդհանուր է նաև սեփական անձի կատարելագործումը, որը բազմաթիվ պրակտիկ-ծիսական և տեսական բնույթի հոգու և մարմնի վարժանքներ է պահանջում: Պոեզիայում հատուկ երանգ են ստանում ես-նա, հոգի-մարմին, արտաքին-ներքին, կյանք-մահ, միացում-բաժանում, բարիք-չարիք և այլ գաղափարներ:

Էմմա Կորխմազյան /Երևան/

**ՍՈՒՐԲ ՍԱՐԳՍԻ ՊԱՇԱՍՄՈՒՆՔԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ  
ԵՎ ՆՐԱ ՊԱՏԿԵՐՈՒՄԸ ԱՐՎԵՍՏՈՒՄ**

Սուրբ Սարգիս գորավարի պաշտամունքը մեծապես տարածված էր Հայաստանում: Ըստ Հայսմափուրքի, նա եղել է հոռմեական իշխան և զո-

րավար Կոստանդին կայսեր օրոք /4-րդ դար/: Հուլիանոս ուրացողի ժամանակ, երբ սկսվեցին հալածանքներ քրիստոնյաների հանդեպ, Սարգիսը իր որդի Մարտիրոսի հետ հեռացավ Արևելք. նախ եկավ Հայաստան, ապա՝ Պարսկաստան, որտեղ և նահատակվեց որդու հետ՝ միասին: Հստավանդության, Մեսրոպ Մաշտոցը նրանց աճյունները բերել տվեց Հայաստան, և Կարբի ավանում կանգնեցվեց սուրբ Սարգսի անունով առաջին եկեղեցին:

Սուրբ Սարգսի վարքը հայտնի է քրիստոնյա աշխարհին, սակայն, կարծյոք, միայն հայկական տարբերակում գոյություն ունի պատմություն իր որդու՝ Մարտիրոսի մասին:

Մեզանում նրանց նվիրված բազում առասպելներ և ասույթներ են ստեղծվել, իրաշագործ են համարվել նրանց աճյունների պահպանման վայրերը, ինչպես նաև պատկերները, որտեղ Սուրբ Սարգիսը միշտ ներկայացվում է նիզակը ձեռքին հեծյալ զորավարի տեսքով, իսկ որդի Մարտիրոսը՝ նստած ծիու գավակին: Պատկերագրական այդ ձեզ շատ կայուն է և օգնում է, առանց տարակուսանքի, միշտ ճանաչել այդ սրբի պատկերները: Այդ հանգամանքը առավել կարևոր է դառնում, երբ գործ ունենք մի հուշարձանի հետ, որի եթոն-դավանական պատկանելությունը պարզ չէ: Այդպիսին է Ղրիմի հարավ-արևմտյան ծայրամասում գտնվող Եսկի-Կերմենի ժայռավոր եկեղեցին, որի միակ պահպանված որմնանկարի վրա տեսնում ենք սուրբ Սարգսին՝ իր որդու հետ: Այստեղ պատկերված է երեք հեծյալ սուրբ զորավար /այդ պատճառով եկեղեցին այսօր հայտնի է «Երեք ծիավորների տաճար» անունով/, որոնցից միայն մեկի ով լինելու է հայտնի մասնագետներին՝ Սուրբ Գևորգի, որը պատկերված է վիշապին նիզակահարելիս: Հեծյալներից առաջինը ներկայացված է տղայի հետ նստած ծիու գավակին, անշուշտ Սուրբ Սարգիսն է՝ իր որդի Մարտիրոսի հետ: Տվյալ պատկերը կարող էր ստեղծվել միայն այն դեպքում, եթե այստեղ լիներ հայկական միջավայր, գուցե և համայնք:

Հայերը հիմնականում բնակվել են Ղրիմի հարավ-արևելյան ծայրամասում, որոնց գաղութը առավել ծաղկման է հասել 14-15-րդ դարերում: Սակայն հայտնի է, որ սկսած 12-րդ դարից, Խերսոնում արդեն եղել է հայկական բնակչություն: Այդ նույն ժամանակում Խերսոնից ոչ հեռու սաւեղծվել է Թեոդորոս իշխանությունը, որի տիրակալներն էին Գավրաս-Տարոնցիների հայկական տոհմի ներկայացուցիչները, որոնք Ղրիմ էին տեղափոխվել Տրապիզոնից: Եսկի-Կերմեն բնակավայրը մտնում էր Թեոդորոս իշխանության կազմի մեջ, իսկ ժայռավոր եկեղեցու որմնանկարները ապացույցն են այնտեղ հայկական համայնքի գոյության: Միայն հայկական միջավայրի գոյությամբ կարելի է բացատրել Սուրբ Սարգսի հայկական պատկերագրության համաձայն ներկայացվելու փաստը:

## ԶՈՒՄՐԾՆՈՑԻ ՏԱՏԱՐԻ ՕԾՍԱՆ ԹԻԱԿԱՆԸ

1. Քաղաքադաշտի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու կամ Զուարթնոց կոչուած վաղմիջնադարեան ճարտարութեան գլուխգործոցի կառուցումն աւանդաբար վերագրում է 642-652 թականներին: Նրա օծումը կապւում է Բիզանդիայի Կոնստանդ Բ կայսեր 652-653 թթ. արեւելեան արշաւանքի հետ, որի ընթացքում կայսրը եղել է Հայաստանում, ըստ Սեբէոսի՝ Դուինում (Սեբէոս, ԽԸ-ԽԹ, էջ 165-168):

2. Մովսէս Դասխուրանցու (գրականութեան մէջ կոչուած նաեւ Կաղանկատուացի) «Աղուանից պատմութեան» մէջ առկայ տեղեկութիւնը Սուրբ Գրիգորի տաճարի «նաւակատիքի» արարողութեանը Կոնստանդ կայսեր մասնակցութեան մասին (ԱՊ, Գ, ԺԵ, էջ 317) յանգում է հեղինակի օգտագործած գրաւոր աղբիւրին՝ «Աղուանից կաթողիկոսների գաւազանագրքին» եւ հայաստիութեան որեւէ կասկած չի յարուցում: Սակայն կասկած է յարուցում Զուարթնոցի նաւակատիքը 652 կամ 653 թ, կատարելը, քանի որ ըստ Սեբէոսի՝ տաճարի շինարարութիւնն աւարտուեց Տայքի իր փաստացի աքտորից 658 կամ 659 թ. Ներսէս Շինող կաթողիկոսի վերադարձից յետոյ (Սեբէոս, ԾԲ, էջ 175):

3. Ուսունասիրողների կողմից ցայժմ ինչպէս հարկն է չի ընկալուել «Աղուանից պատմութեան» Բ գրքի ԻԲ գլխում առկայ մեկ այլ տեղեկութիւն՝ Կոնստանդ կայսեր կողմից «յաշխարհն Պարսից» կատարուած երկամեայ արշաւանքի մասին «յինն եւ ի տասաներորդի ամի թագաւորութեանն իւրոյ», այսինքն 659-660 թթ. (641+19): Այն պարզապէս նոյնացուել է Սեբէոսի նկարագրած 652-653 թթ. արշաւանքի հետ եւ երկու պատմութիւնների բազմաթիւ անհամապատասխանութիւնների պատճառով համարուել անհաւաստի:

4. Յատուկ ուսումնասիրութեամբ մենք արդէն ցոյց ենք տուել, որ Դասխուրանցու համապատասխան դրուագը մաս է կազմում նրա կողմից իլ երկի 32 գլուխներում (ԱՊ, Ա, իե-լ եւ Բ, ԺԸ-ԽԵ) գրեթէ բառացի արտագրուած մի արժեքաւոր աշխատութեան, որը շարադրուած է 684 թ. Է դարի 30-80-ական թականներին Հայոց Արեւելից կողմերում կատարուած դեպքերին բազածանօթ անանուն հեղինակի կողմից: Համադիր քննութիւնը աներկայօրէն հաստատում է վերջինիս վկայութիւնների եւ ժամանակագրութեան հայաստիութիւնը (“Կավказ և Վիզայու”, պրակ 6, էջ 24-36):

5. «684 թականի պատմութիւնը» մանրամասն նկարագրում է Գարդմանի Զուանշիր իշխանի երկու հանդիպումները Կոնստանդ կայսեր հետ. վերջինիս գահակալութեան 19-րդ տարում, այսինքն՝ 659 թականին

«յաշխարհն Մարաց... ի Չունգը գիւղ» եւ յաջորդ տարի՝ «ի փոխանորդել գարնանային ժամուն... ի Վաղարշապատ քաղաքի... ի կայսերական մարզարանն...» (ԱՊ, Բ, իբ, էջ 184-185): Սկզբնաղբիւրը ոչինչ չի ասում Չուարթնոցի նաւակատիքի մասին, ճիշտ այնպէս, ինչպէս եւ Սերեսի մեզ հասած բնագիրը: Սակայն բերուած նիւթերի համադրութիւնը բաւարար է բում եզրակացնելու, որ տաճարի շինարարութեան աւայնտն ու օծումն անհրաժեշտ է թւագրել 660 թւականի գարնան ժամանակահատուածով:

6. Յաւարտս, «Չուարթնոցի դարաշրջանի» գրականութեան ուշադիր ընթերցանութիւնը ժամանակակից քաղաքական ու դաւանական անցուդարձերի ֆոնի վրայ թոյլ է տալիս խորհել ճարտարապետական արուեստի այս գլուխգործոցի՝ նաեւ շինարարութեան իրագործման երեւոյթի ֆենոմենալութեան մասին:

## Հայկ Հակոբյան /Երևան/

### ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ԼԵԳԵՆԴԻ ՀԻՆ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԵՎ ՀՈՒՆԱԿԱՆ ԶՈՒԳԱՀԵՌՆԵՐԸ

Հայագիտության մեջ վաղուց ի վեր ուշադրության է արժանացած Ազաթանգեղոսից հասած՝ Տրդատ Սեծի ու Գրիգոր Պարթևի հակադրման ու միության պատմությունը, որ զարգանում է մեկի համար զղումով, մաքրագործմամբ ու դարձով, իսկ մյուսի համար՝ վեհ գաղափարների համար կրած տառապանքով, ինքնազնիողությամբ ու սրան հաջորդած արժանի հատուցմամբ՝ պսակվելով քրիստոնեական գաղափարի հաղթարշավով Հայոց երկրով ու հարեւան տարածքներով:


Գրիգոր Լուսավորչի կենսագրության առանձին հատվածներ բավական նման են իին Աստվածաշնչային սյուժեների /Դանիելի նետումը առյուծներով հորը, Մարգարեություն Դանիելի, գլ. 6, 16-18, և Տրդատի կալանքը Խոր Վիրապում/: Այս և այլ ակնառու զուգահեռներ օրինաշափ են. ընտրելով իրենց դժվարին և ուրույն ուղին՝ շատ նվիրյալներ կամա, թե ակամա կրկնում էին իրենց նախորդներին թե՛ տառապանքների, թե՛ հատուցման պահին: Հարուստ պատմական, բանահյուսական ու ազգագրական նյութը հնարավորություն է տալիս Աստվածաշնչային որոշ սյուժեների և նրանց արձագանք երևացող անցքերի մեջ տեսնել ավելի իին, իիմնավոր շերտեր: Մասնավորապես, Գրիգոր Լուսավորչի հրեղեն սյան տեսիլքը և նրա բանտարկումը Արտաշատի Խոր Վիրապում ոչ միայն մերձագույն զուգահեռներ ունեն իին արեւելյան և միջերկրածովյան դիցաբանության մեջ, այլև տարբեր արտահայտչամիջոցներով ներկայացնում են

միևնույն երևոյթը՝ ծիսական մահը /երազը/ և վերածնումը /արքնացումը/: Ուշագրավ է, որ այս սյուժեներում կայուն է ոչ միայն դեպքերի ընդհանուր հաջորդականությունը, այլև անձանց ու իրերի մասնակցության եղանակն ու ձեզ /Հովսեփը ջրհորի հատակին, Դիոնիսոսը բանտարկված նկուղում, Քրիստոսը ջրհորի մոտ/: Գրիգոր Լուսավորչին վիրապը նետելու սյուժեն, այնուամենայնիվ, առավել հարազատ զուգահեռ ունի իին հունական միջավայրում /Դիոգենես Լաերտացի/: Վերջինիս օգլությամբ հնարավոր է դառնում սյուժեի ծիսական մանրամասների առարկայական ներկայացումը:

Մինչդեռ խեթական ծիսակարգում, Հին և Նոր Կտակարաններում և հայ ազգագրական և բանահյուսական ժառանգության մեջ /Գ.Տեր-Մկրտչյան/ ստորև բերվող նյութի զուգահեռներն ավելի ոճավորված են: Համաձայն Ազաթանգեղոսի՝ Տրդատի հրամանով Գրիգոր Լուսավորչին կապում և իջեցնում են Արտաշատ քաղաքի «վիրապն ներքին» /ԺԱ.122/: Պյութագորասին նվիրված ավանդության մեջ փիլիսոփան կամովին հաստատվում է գետնի տակ: Երբ տարիներ անց Գրիգորին հանում էին վիրապից՝ «տեսին զի թխացեալ էր մարմին նորա իբրև զածուխ սեացեալ» /219/: Իր հերթին, Պյութագորասը Սանդարամետից դուրս գալիս շատ հյուծված էր, նմանվելով կմախրի և պնդում էր, թե ինքը վերադարձել էր Արտից՝ խավարի քաջավորությունից: Հիշյալ ավանդություններում նկատելի է երկու կարգի միջնորդություն. գետնի տակ գտնվող Գրիգորին լույս աշխարհի հետ կապում էր «կին ոմն այրի» /124/, իսկ Պյութագորասին՝ հարազատ մայրը: Իրենց հերթին՝ Գրիգոր Լուսավորիչն ու Պյութագորասը միջնորդ են ծառայում մի դեպքում ժողովրդի և Աստծո, իսկ Մյուսում՝ ժողովրդական ժողովի և աստվածների միջև:

Քրիստոնեության տարածումից դեռ շատ առաջ Միջերկրածովում և Հին Արևելքում, այդ թվում նաև Հայաստանում, գոյություն ունեին մահվան ու հարության /իրական կամ ծիսական/ հար և նման դրսևրումներով արտահայտվող կրոնական պատկերացումներ: Նրանց կենտրոնական առանցքը պահված կամ թաղված կյանքն էր, որ ընդունակ էր «հավերժական վերադարձի» /Է.Բենվենիստ, Ա.Մեյե, Վ.Իվանով/: Այս պատկերացումներն էլ լավագույնս նախապատրաստեցին քրիստոնեական հարության գաղափարը:

Նորահաստատ քրիստոնեական ուսմունքի հիմքում ընկած մի շարք դրույթներ, բխելով իին ակունքներից, մասնավորապես Հայաստանում ունեին խոր արմատներ՝ ապահովելով նոր հավատի և ավանդական ազգային տիպերի համեմատաբար ներդաշնակ միացումն ու միաձուլումը: Արա դրսևրումներից մեկի արդյունքն էլ այն էր, որ կենդանի մարդը՝ անկախ իր գիտակցությունից, որպես վաղուց արդեն գոյություն ունեցող մշակու-



թային կալապարմերի մեջ վերածվելով կենդանի լեգենդի և սրբացվելով հաջորդ սերունդների կողմից:

## Նյութա Հակոբյան, Արամ Քալանթարյան /Երևան/

### ԴՎԻՆԻ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅՈՒՆԸ

1. Միջնադարյան Հայաստանի մայրաքաղաք Դվինը 5-րդ դարի 70-ական թվականներից սկսած մոտ չորս ու կես դար /մինչև 10-րդ դ. 20-ական թթ/ եղել է հոգևոր /կաթողիկոսական/ կենտրոն:

2. Ցավոք, սույն են կաթողիկոսարանի հիմնադրման ժամանակի հոգևոր բարձրաստիճան անձանց գործունեության, դեպքերի և հոգևոր կենտրոնի հետ առնչվող հավաստի վկայությունները: Խոսքը վերաբերում է առաջին հերթին Գյուտ Արահեղցի, Ջրիստափոր Տիրառիջցի և Հովհան Մանդակունի կաթողիկոսներին, որոնց անվան հետ է կապվում կաթողիկոսարանը Վաղարշապատից Դվին տեղափոխմելու հարցը 5-րդ դարի 60-80-ական թթ.:

3. Հոգևոր կենտրոնի տեղափոխումը տեղի է ունեցել 5-րդ դ. 60-ական թթ., անմիջապես Հազկերտի մահից հետո, երբ փոխվեց Սասանյանների վերաբերմունքը հայերի նկատմամբ, և նոր մարզպանները իրենց նստավայրը դարձրին Դվինը: Բնականաբար, ընդունված կարգով, մայրաքաղաքում պետք է լիներ հոգևոր կենտրոնը: Առ այդ որոշ ակնարկներ կան Ղազար Փարպեցու մոտ: 480-481 թթ. Դվինն արդեն Հայաստանի մայրաքաղաքն էր, և նրա գլխավոր եկեղեցում /Կաթողիկեում/ պատարագ է մտուցում Հովհան Մանդակունին:

Հովհան Մանդակունու կաթողիկոսության առաջին տարիներին, սակայն, Հայաստանի քաղաքական վիճակը չէր կարող նպաստել տեղափոխության հետ կապված շինարարական միջոցառումների իրականացմանը: Դվինում բացված ճարտարապետական կառույցները /5-րդ դ. կաթողիկոսական պալատ, Կաթողիկե եկեղեցու արտաքին սյունարան/ և որոշ օժանդակ նյութերի համադրումը մեզ բերում է այն համոզման, որ կաթողիկոսարանի տեղափոխումը կատարվել է Գյուտի ժամանակ՝ 460-470-ական թթ.:

4. Մեր պատմագրության մեջ բազմիցս արծարծվել է Դվինում ատրուշանի կառուցման, Վարդան Մամիկոնյանի կողմից կործանման, եկեղեցու հիմնադրման ժամանակադրության խնդիրը: Այդ դեպքերի մասին պատմող հիմնական աղբյուրը Հովհաննես Դրասխանակերտցի և Թովմա Արծրունի /9-10-րդ դդ./ պատմիչներն են: Կարծում ենք, եղած վկայություննե-

Իր ժամանակավրեալ են և կապվում են ոչ թե 5-րդ դ. իրադարձությունների, այլ 571թ. Կրտսեր /Կարմիր/ Վարդանի ղեկավարած ապստամբության ժամանակ կատարված իրողությունների հետ:

## Պիոն Հակոբյան /Երևան/

### ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ԱԹՈՌՆԵՐԸ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ՕՐԵՐԻՆ

Գրիգոր Լուսավորիչն իր գործունեությունը ծավալել է ոչ ամայի վայրում: Նախորդ երկուսուկես դարերում քրիստոնեությունը Հայաստանում անցել էր ինքնահաստատման դժվարին ճանապարհ և միավորվել առանձին եպիսկոպոսական աթոռի շուրջ, որի կենտրոնն, ըստ ավանդական պատմագրության, Արտազի Թաղեի վանքն էր, իսկ ըստ նորագույն հետազոտությունների՝ Աշտիշատը, ուր Գրիգոր Լուսավորիչը կառուցել է Հայոց առաջին և մայր եկեղեցին /Բուզանդ Գ, ԺԴ/:

Հակառակ Ագանթագեղոսի թանձրացած գույներով պատումներին՝ Հայաստանի քրիստոնեացումն աներևակայելիորեն արագ կատարվեց, որի մեջ իրենց վճռական դերը խաղացին ինչպես առաջին առաջալների ու նրանց ա-աշակերտների առաջնորդությամբ գործող եին եկեղեցին և վաղուց ձևավորված քրիստոնյա համայնքները, այնպես էլ քրիստոնեությանը հարած քրմական դասը: Գրիգոր Լուսավորչի ձեռնադրած առաջին եպիսկոպոսներից տասներեքը երբեմնի քրմական ազդեցիկ ընտանիքների ներկայացուցիչներ էին /ինչպես Աղբիանոսը/, որոնցից շատերի իշխանությունը միաժամանակ տարածվում էր երկու և ավելի գավառների, նախարարական տների և պետական ու հանրային կյանքի բնագավառների վրա:

Գրիգոր Լուսավորչի կյանքի կոչած թեմերի բավականաշափ ծավալուն ցուցակը պահպանվել է Ագաթանգեղոսի Պատմության, Գրիգորի վարքի հունական ու արաբական խմբագրությունների և Ուխտանեսի Պատմության դրվագներում: Համադրելով այդ սկզբնադրյուրների տվյալներն իրար հետ, կարելի է նվազ թերիներով վերականգնել անվիճելիորեն Գրիգոր Լուսավորչի հիմնադրած շուրջ 45 եպիսկոպոսությունների անունները, որոնց ցանկը սակայն, մեր կարծիքով, ավելի ստվար պիտի լիներ:

Այս համոզմանն է բերում Գահնամակի և Զորանամակի բաղդատությունը տվյալ ցանկի հետ: Պարզվում է, որ Գահնամակի 70 նախարարական տներից ու գավառներից նիայն 26-ի եպիսկոպոսական աթոռներն են հիշատակված Ագաթանգեղոսի պատմության և Գրիգորի Վարքի օտա-

րալեզու խմբագլաւթյուններում: Եթե մնացած 44-ից 10-12-ը մի կողմ թողնենք ոլուգևս միևնույթի նախարարական տան գուգահեռ ճյուղերի անուններ, ապա առանց եպիսկոպոսական աթոռների մնում են ավելի քան 32 նախարարություններ ու գավառներ, այն էլ այնպիսիք, որոնք հայոց արքայական քանակին տրամադրում էին 300-ից մինչև 4000 ձիավոր զորք, և սա այն դեպքում, եթե եպիսկոպոսական հայտնի աթոռներից շատերի ուազմական հզորությունը պակաս էր դրանից: Նշանակում է՝ մնացած նախարարական տներից ու գավառներից գոնե 15-ում նույնպես Գրիգոր Լուսավորիչը պետք է հիմնած լիներ եպիսկոպոսական աթոռներ, որոնցից մի քանիսի անունն, ի դեպ, հիշվում է հետագա դարերի պատմական վավերագրերում:

Մեր ենթադրությամբ՝ այդ եպիսկոպոսությունները հետևյալներն են. Վահունյաց /Վահելունյաց/, Կասպից, Գնքունյաց, Սահառունյաց, Աշոցյան, Դիմաքսյան, Առավելյան, Զյունական, Ընծայացոց, Սլկունյաց, Սպանդունյաց, Հավնունյաց, Վարաժնունյաց, Արտաշեսյան և Մուրացան: Ըստ այսմ՝ Գրիգոր Լուսավորչի հիմնած առաջին եպիսկոպոսական աթոռների ընդհանուր թիվը հասնում է վեց տասնյակի, որն ավելի քան համապատասխանում է այն օրերի իրականությանը: Հիշենք, որ մեկ դար անց, արդեն մարզպանական Հայաստանում, որը բավականաշափ փոքր էր Արշակունյաց Հայաստանից, Շահապիվանից եկեղեցական ժողովին մասնակցում էին 40 եպիսկոպոսներ, որոնք, սակայն, առկա բոլոր թեմերը և եպիսկոպոսական աթոռները չեին ներկայացնում:

Հիմնելով առաջին եպիսկոպոսական աթոռները՝ Գրիգոր Լուսավորիչը նրանց հոգևոր տեսչությանն է վստահում ինչպես առանձին նախարարական տների, գավառների և աշխարհագրական շրջանների բնակչության, այնպես էլ՝ երկրի նշանավոր քաղաքների և արքունի տանն ու արքայական քանակում ծառայող հավատացյալների հոգևոր կարիքները:

Մուրադ Հասրաթյան /Երևան/

## ՀԱՅԱՏԱՆԻ ԵՎ ՀԱՐԵՎԱՆ ԵՐԿՐՄԵՐԻ ՏԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՌՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՂ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ

1. Հայաստանի և հարևան ու մերձակա քրիստոնյա երկրների վաղ միջնադարյան արվեստի ու ճարտարապետության ընդհանրությունների պայմանավորվածությունը նրանց ընդհանուր հիմքով՝ հելլենիստական արվեստով:

2. Հայաստան, Վրաստան, Ասորիքի, Կապաղովկիայի բազիլիկ եկե-

ղեցիների ճարտարապետության զարգացման միասնական գործընթացը 4-6 դր.: Միաժամանակ այդ երկրներում եկեղեցական ճարտարապետության տեղական առանձնահատկությունների առկայությունը:

3. Վաղ միջնադարի հայկական եկեղեցիների հունարեն և ասորերեն արձանագրությունները որպես հայ-բյուզանդական, հայ-ասորական ճարտարապետական կապերի վկայություններ: Երերույքի բազիլիկը որպես Հայաստանում ասորական վաղ քրիստոնեական արվեստի ազդեցության ամենաբնորոշ հուշարձան: Նրա հունարեն արձանագրության նույնությունը /ըստ նոր վերծանության/ Ասորիքում Դեյր Սիմանի 5-րդ դ. բազիլիկ եկեղեցու արձանագրության հետ:

4. Հայաստանի 4-6 դր. դամբարանների ու հուշակոթողների հորինվածքների ծագումնաբանական կապը Ասորիքի մեմորիալ ճարտարապետության հետ: Վաղ միջնադարում Հայաստանի, Վրաստանի և Աղվանքի եկեղեցական ճարտարապետության ընդհանրությունները, պայմանավորված այդ երկրների դավանական ու քաղաքական, տնտեսական սերտ կապերով, բնական նման պայմաններով ու նույն շինանյութերով:

Հայ ճարտարապետների մասնակցությունը Վրաստանի ու Աղվանքի որոշ եկեղեցիների կառուցմանը: Վաղ քրիստոնեական Հայաստանի ճարտարապետական զարգացման գործընթացի կապը հայ եկեղեցու անկախության հետ: Քաղկեդոնի տիեզերական ժողովի որույթների մերժումը և 6-րդ դ. խզումը բյուզանդական եկեղեցու հետ որպես խթան 7-րդ դ. սկզբից հայկական ինքնուրույն ճարտարապետական դպրոցի ստեղծման համար:

## Բարկեն Հարությունյան /Երևան/

### ՄԵԾ ՀԱՅՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ ՋՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԾՐՋԱՆՈՒՄ

Ըստ հայագիտության մեջ ընդունված կարծիքի, Մեծ Հայքի 15 աշխարհները գոյություն չեն ունեցել իրականում Հայոց թագավորության շրջանում և «Աշխարհացոյցում» հանդես են եկել 6-րդ դարի վերջին կամ 7-րդ դարի սկզբին, Մավրիկիոս կայսեր (582-602) վարչական վերափոխությունների հետևանքով: Սակայն Կլավդիոս Պտղոմեոսի «Աշխարհագրության» տվյալները մերժում են նման ընկալումը, որովհետև արձանագրում են Մեծ Հայքի ըստ աշխարհների վարչական բաժանումը 2-րդ դարում:

Խնդրի քննության համար կարևորություն են ներկայացնում Ագաթանգեղոսի «Պատմութիւն Հայոց»-ի հաղորդումները, որոնք պատշաճ ու-

շաղրության չեն առնվել: Մինչդեռ նրանք հնարավորություն են տալիս լուսաբանելու Հայոց թագավորության վարչական բաժանումը 3-րդ և 4-րդ դարերի սահմանագլխին ու հավաստում են Ազաթանգեղոսի երկի նախնական բնագրի 4-րդ դարին Վերաբերելը (երբ այն հունարեն գրված սովորական վարքագրություն էր):

Ագաթանգեղոսի համաձայն, Հայոց Տրդատ թագավորը Գրիգոր Լուսավորչին քահանայապետ ծեռնաղրելու համար Կապադովկիայի Կեսարիա քաղաքն է ուղարկում և նրա հետ մեկտեղ՝ «զգիսատրս նախարարացն և զկուսակալս աշխարհացն: առաջին՝ իշխանն Անգեղ տան, երկրորդ՝ իշխանն Աղձնեաց, որ է բղեաշխն մեծ, երրորդ՝ իշխանն մարդպետութեան իշխանութեանն, չորրորդ՝ իշխանն թագակապ իշխանութեան ասպետութեանն, հինգերորդ՝ իշխանն սպարապետութեան, զօրավար Հայոց աշխարհին, վեցերորդ՝ իշխանն Կորդովտաց աշխարհին, եօթներորդ՝ իշխանն Ծոփաց աշխարհին, ութերորդ՝ իշխանն Գուգարացոց աշխարհին, որ միս անուանեալ բղեաշխն, իններորդ՝ իշխանն Ոշտումեաց աշխարհին, տասներորդ՝ իշխանն Մոկաց աշխարհին, մետասաներորդ՝ իշխանն Սիւնեաց աշխարհին, երկոտասաներորդ՝ իշխանն Ծալեից աշխարհին, երեքտասաներորդ՝ իշխանն Ուտիացոց աշխարհին, չորեքտասաներորդ՝ իշխանն շահապ Զարաւանդ և Հեր զաւարի, հնգետասաներորդ՝ իշխանն մաղյագութեան տանն, վեցտասաներորդ՝ իշխանն Արծրունեաց» (Ազաթանգեղայ Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ Գ. Տեր-Սկրուչեան և Ստ. Կանայեանց, Տփոլիս, 1909, § 795, էջ 414):

Իշխանացանկի պատմաաշխարհագրական և քարտեզագրական վերլուծությունը ցույց է տալիս, որ Կեսարիա են մեկնել ոչ բոլոր կուսակալները: Ազաթանգեղոսը մեկ այլ կապակցությամբ (պարբ. 873) հիշատակում է Կաղարջք և Կասպք աշխարհները և Նոր Կասպք բղեշխությունը, որոնց կուսակալները չեն հիշատակվում Գրիգոր Լուսավորչին ուղեկցողների թվում: Հնարավոր է, որ Այրարատը ներկայացնում էին հայ Արշակունի զահակալները, չնայած չի բացառվում, որ այստեղ կուսակալ էին մաղյագության իշխանները: Բաց են մնում Տուրութերանի, որ հիշյալ ժամանակներում կոչվում էր Հաշտենի կողմանք, և Ակիլիսենե-Եկեղյացի տարածքները, ինչպես նաև՝ Տայոց աշխարհը: Հետևաբար, պետք է ենթադրել, որ դրանց կուսակալները նույնպես Կեսարիա չեն մեկնել, եթե, իհարկե, սպարապետության իշխանի անվան ներքո ի նկատի չունենանք Մամիկոնյան տան ներկայացուցչին, որի կուսակալությանն էր հանձնված Տայքը:

Ի մի բերելով քննության արդյունքները, գտնում ենք, որ 3-րդ դարի վերջին և 4-րդ դարի սկզբին Մեծ Հայք թագավորությունը կազմված էր ներքոհիշյալ աշխարհներից. Անգեղ տուն, Աղձնիք կամ Աղձնյաց բղեշ-

խորթյուն, Կորդուք կամ Կորդովտիք (=Պտղոմեասի Գօրծողություն: . Սոկը, Ոշտունյաց աշխարհ (=Արմ. Վասպուրականին կամ Պտղոմեոսի Տօտուտիչ, Կորճայք (առանց Կորդուք գավառի), Կորճայք Երկրորդ կամ Պարսկահայք (=Զարավանդ և Հեր գավառին), Մարդպետական (=Արլ. Վասպուրականին), Սյունիք, Ծավդեք (=Արցախ), Ուտեացվոց աշխարհ կամ Ուտիք, Կասաք, Գուգարք, Կազարջք, Տայք, Խաղտիք, Հաշտյանք կամ Տուրուբերան, Նոր Շիրական, Եկեղյաց, Ծոփք և Այրարատ: Արանցից չորսը բղեշխորթյուններ էին. Աղճնիք, Կորդուք, Նոր Շիրական և Գուգարք: Պտղոմեոսյան Սակասեն և Շակաշենը դադարել է առանձին աշխարհ լինելուց դեռևս երրորդ դարի կեսերին: Ազարանգեղոսի Երկում ևս այն մաս է կազմում Ուտիացվոց աշխարհի, Կաղարջքի միացումը Գուգարքին և Մարդպետականի միացումը Ոշտունյաց աշխարհին տեղի ունեցավ հինգերորդ դարում, իսկ Եկեղեցի և Խաղտիքի միացման ժամանակաշրջանը մնում է բաց:

### Գագիկ Հարությունյան /Երևան/

## ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԳԱՀԵՐԵՑՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ ԱՔԾԵՎԻ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՒՄ (1263թ.)

ԺԳ դարի Երկրորդ կեսին միջեկեղեցական հարաբերություններում շոշափվող կարևորագույն խնդիրներից էր Տիեզերական Եկեղեցու միասնականության հարցը, որը կազմում էր նաև հայ-հոռմեական և հայ-քուզանդական Եկեղեցական փոխհարաբերությունների հիմնական բովանդակությունը: Ընդսմին, այս ժամանակաշրջանում միասնության կարելի էր հասնել միայն որևէ Աքոռի գերազահության պայմաններում, քանզի ձևավորված կառույցն անհնարին էր դարձնում ընդհանրության այլ ձև: Եկեղեցու միասնության քաղաքականության հիմնական կրողն իր զարգացման բարձրակետին գտնվող պապականությունն էր, որը փորձում էր իրեն ենթարկել մյուս աքոռները, ըստ այդմ էլ Տիեզերական Եկեղեցու ներսում կստեղծվեր ուղղահայաց կառույց:

Խաչակրաց արշավանքների և պապականության արևելյան քաղաքականության կապակցությամբ բավական ակտիվացան հայ-հոռմեական միջեկեղեցական հարաբերությունները, սակայն բանակցությունների մեջ ներլաւագած Սիսն ու Հովոմկլան օժտված էին տարբեր իրավասություններով և հետապնդում էին տարաբնույթ նպատակներ:

Կիլիկյան Հայաստանի հետ վարվող բանակցություններում պապականությունն աշխատում էր ապահովել նրա ուազմաքաղաքական օժան-

դակությունը Մերձավոր Արևելքի խաչակիրներին, մինչդեռ հարաբերությունները Հայոց եկեղեցու հետ հետապնդում՝ էին այլ խնդիրներ, մասնաւորապես կաթոլիկություն տարածել հայ իրականության մեջ և հայոց նվիրապետությունը ենթարկել պապականությանը:

1263թ. Ուրբանոս Դ պապի (1261-1264թթ.) նվիրակի Տյուրոսի արքեպիսկոպոս Գուլիելմոս. Բ նախաձեռնությամբ խաչակիրների մայրաքաղաք Աքքայում ժողով է իրավիրվում, որին մասնակցում էին Աքքայի քաղաքագլուխը, տաճարականների հոգևոր-ասպետական միաբանության Մեծ մագիստրոսը, հիվանդախնամների միաբանության ընդհանուր հրամանատարը, ծովեցերքի խաչակիր բոլոր տիրակալները, քաջի Անտիոքի իշխանից: Աքքայ են մեկնում հայոց երկու պատվիրակություն. մեկը՝ Հեթում Ա թագավորի (1226-1270թթ.) հանձնարարականներով, մյուսը՝ Կոնստանտին Բարձրաքերդի կաթողիկոսի (1221-1267թթ.): Հռոմեական պատվիրակությունը գլխավորում էր ժամանակի նշանավոր մատենագիր Մխիթար Վարդապետ Սկևորացին (Տաշրացի):

Ժողովում քննարկվող խնդիրներից կարևորագույնը Տիեզերական եկեղեցու կառույցում արողների զբաղեցրած տեղի և դերի հարցն էր: Հռոմեական եկեղեցու գահերեցությունն առաջին հերթին աշխատում էին հիմնավորել Պետրոս առաքյալով, որին Քրիստոսը կարգել էր առաքյալների գլխավոր և հանձնել եկեղեցիների գերագույն իշխանությունը: Հայոց եկեղեցական շրջանակները պաշտպանում էին տասներկու առաքյալների համապատվության և իրավահավասարության սկզբունքը. «... և յեկոտասան արոռոցն զմինն ետ Պետրոսի. Երեք առաքեալքն երկոտասանիցն և երեք յեօթանասնիցն ի Հայս կայ»:

Բանակցությունների ընթացքում Հայոց եկեղեցին աշխատում էր շեշտը դնել արողների ծևավորման պատմական ավանդույթի վրա: Մասնավորեցնելով, թե Հայոց կաթողիկոսության իրավասությունները ծևավորվել են առավելապես էթնիկական սկզբունքի վրա, Հայոց եկեղեցուն մեղադրում էին այն քանում, որ նվիրապետությունը թերի է, քանզի այն պատրիարք չի գլխավորում: Մխիթար Սկևորացին Հայոց եկեղեցական կազմակերպությունը ներկայացնում է որպես ինքնամփոփ և ավարտուն կառույց:

Աքքայի քանակցությունների և ժողովի ընթացքում, ի տարբերություն Կիլիկյան Հայաստանի քաղաքական որոշ շրջանակների, Հռոմեական կաթողիկոսարանը որևէ զիջում անելու ցանկություն չցուցաբերեց, քանզի միասնության հարցում տարակարծիք էր պապականության հետ և գտնում էր, որ եկեղեցու գլուխը ոչ թե Հռոմի պապն է, այլ՝ Քրիստոսը:

## ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԻԹՈԼՈԳԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱՁԵՎԸ (ՄՈԴՈՒ) ԵՎ ՍԻՄՎՈԼԻԿԱՆ

1. Հայոց դարձի պատմության հիմնական սկզբնաղբյուրը՝ «'!գաքանգեղայ պատմութիւն»-ը, ենթադրում է երեք հիմնական շերտ՝ պատմական, ավանդաբանական և վկայաբանական: Եթե այս երկն ընկալենք ըստ արտաքին պատկերների և առօրյա տրամաբանության, կվերածվի պարզունակ ու կոպիտ մի գրույցի, ինչը հակառակ է միջնադարյան գրական մտածողության տրամաբանությանն ու օրենքներին: Կյանքի ու պատմության ուղիղ արտացոլման խնդիր չի նախատեսվում այստեղ, որ նշանակում է, թե իրային իրականության հետքեր կամ առարկայական ոլոտումներ չպետք է որոնել պատմության նյութականացված պատկերները սոսկ ակամա արդյունքն են հեղինակի խոսելակերպի և ենթադրում են երբեմն կարծես ակնհայտ, երբեմն մեկնություն խնդրող խորհուրդներ: Այս հայացքով ենք ընթերցում ավանդաբանական պատմությանը հյուսված Գրիգոր Լուսավորչի վկայաբանությունն ու տեսիլքը:

2. Գրիգոր Լուսավորչի կալանավորման պատմությունը գաղտնաբանություն ունի. խորհրդավոր լույս է ճառագում «Խոր Վիրապի» բանտից ու նման է մարած աստղի լույսին: Հայոց առաքյալի շարչարանքների պատկերը, կալանքն ու ազատագրումը որպես թեմատիկ-սյուժետային պայմանաձև (մոդուս), համախոս է լատին վաղ աստվածաբանների, մասնավորապես, Տերտուլիանոսի, շղթայվածի միթոլոգեմին տված մեկնությանը: Այստեղ կրակատար և լուսավորող Պրոմեթեսի գաղափարը զուգադրվում ու նույնացվում է քրիստոնեական մարտիրոսության գաղափարին, բերելով իր այլաբանություններն ու խորհրդանշերը: «Ագաթանգեղայ պատմութիւնն» այս կոնտեքստից հեռու չենկուզ և իր հեղինակի խոսքով. «Ընկալան զԼուսաւորիչ հուր կենդանութեան, այս ինքն զբանն Աստուծոյ»: Հայոց առաքյալի անունն էլ պատահական չեն. Գրիգորիոս - հուն. զգոն, աշալուրջ, մշտարթուն, հսկող: Նրա կալանքը, որ ըստ Ն. Աղոնցի, տասներեք ամիս է և խորհրդանշում է հայոց հին տոմարը (կամ մեկ սիդերիկոն), նման է ծիսական հսկման, իսկ այրի կնոջ ձեռքից հաց ստանալը՝ հաղորդության, ավելի հին շերտում՝ մայր հողի հետ կապվածության: Խորհրդանշային է նաև «զբանն Աստուծոյ», այս է՝ Լույսը կրողի ազատագրումը որպես ժամանակի պահանջ ու անհրաժեշտություն, և դա ակներև է հիշեցնող պայմանական անձի անունով՝ Օտա /հուն. օտա, այնժամ/:

3. Այս պատմության մեջ բացարձակորեն այլաբանական է Տրդատի խոզակերպությունը, որի ռեալիստական մեկնությունը /ինչ-որ հիվան-

դության ակնարկ/ շահո պարզունակ է, գոեհկության հասնող: Այստեղ պարզ ընթերցվում է հոգևոր կաշկանդման գաղափարը և հեթանոս թագավորի կնիքի պատկերը վարագ: Վարագապատկեր մատանին, որ կրում էին հայ նախարարները և պարսից արքաները, հոգու կաշկանդման օղակն է, իսկ խոզացյալ Տրդատը՝ ժողովրդական ավանդությունից վկայաբանություն մտած մի դիմակ: Հեթանոս արքայի բուժումը Գրիգորի զորությամբ միստերիալ պայմանածն է՝ ազատագրում իին դավանանքից ու մոլորության օղակ-կնիքից:

4. Լուսավորչի վկայաբանության միստերիալ-հանդիսավոր պսակը տեսիլքն է, ուր դարձյալ գործում է հնագույն մի խորիրդանիշ՝ Հեփեստոսի մուրճը՝ ոսկեհուր որպես լույսն ազատագրող ուժ Երկնային սերովքեի ձեռքին: Իջման գաղափարը Երկու շերտ ունի՝ «տեսչութիւն Աստուծոյ» (հուն. այցելություն, դիտում, հայեցում) և «տէրն մեր Յիսուս Քրիստոս», որ ձեռագրի լուսանցային հավելում է (1569թ., գրիչ Հակոբ, Բաղեշ)՝ համախոս ժողովրդական ավանդությանը:

Վիգեն Ղազարյան /Երևան/

## ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ ԽՈՐԱՆՆԵՐԻ ՊԱՏԿԵՐՆԵՐՈՒՄ

Մի շաբք միջնադարագետ արվեստաբանների հետաքրքրել է խորանների (համաձայնության տախտակների) ծևավորման ներքին իմաստը (Կ. Նորդենֆալկ, Ս. Տեր-Ներսիսյան, Կ. Վեսսել): Բայց դժվար է ըմբռնել, թե ինչո՞ւ են անվերջ պատկերվում 2-3-4 կամարաշարքեր, 2-4 սյուներ, ապա նաև գլխազարդերի կամ կամարների մոտից բարձրացող ակրոտերիոններ (եղջյուրներ, ինչպես ասում են «Խորանների մեկնությունները»), խաչի ձևեր, որ մերք բարնված են ներքին Երկրաշափական զարդերում, մերք հաղթականորեն հայտնվում են կամարների վրա կամ միջև, կամնելյուրներով սյունների կայուն գույներ, խորանների կամարների շուրջը կրկնվող սիրամարգեր, ձկնաքաղ տարբեր հավեր, կաքավներ, աքաղաղներ, բաղեր, աղավնակերպ թոշուններ, արմավներ, ծիրենիներ, նոնենու ճյուղեր՝ պտուղներով և այլն:

Դեռևս 331թ. Կոստանդին Մեծ կայսեր պատվերով ալիված շքեղ Ավետարաններում գրչագրի սկիզբը ներկայացրել են համաձայնության տախտակների կիրառումը բացատրող Եվսեբիոսի Թուղթը Կարպիանոսին և նրա կազմած ցանկ-աղյուսակները, որոնք, անկասկած, այն ժամանակ իսկ ձևավորված էին խորանների ձևով: Թուղթն ու ցանկերը ավարտ-

վում էին բոլորածև տաճարի պատկերով (թոլոս), որ հետագայում ս'ունում է բաղդախինի (կիբորժում, տեմպիետո) տեսք: Այդ ամենը ներկայացնում է իդեալական ճարտարապետության մի համակառույց-շքամուտք, սյունաշար, սրբարան:

Ավետարանների պատկերազարդման առաջին մասում (խորաններ) Եվսեբիոսը նկատի է ունեցել կայսերական կամարաշարքերը (Նորդստրյում) կամ բազիլիկանները (Վեսսել), ավելի կոնկրետ՝ խորանածև ձևավորված հողմեական օրացույցները (Նորդենֆալկ): Խորանների հայ մեկնիչները, որոնք հավանաբար ունեցել են խորանների ձևավորումը մեկնող Եվսեբիոսի կամ այլ հեղինակների հունարեն, ասորերերեն կամ թարգմանական տեքստեր, խորանները որոշակի պատկերացնում են իբրև իդեալական ճարտարապետական կառույց՝ մուտք, գավիր և եկեղեցի (Շնորհալի):

Հետազոտողները եկել են այն ընդիանուր եզրակացության, որ Եվսեբիոսի Թուղթը, կանոնների համաձայնությունը (համաձայնության տախտակները) և տեմպիետոն սկզբից էլ ունեցել են կայուն և որոշակի համակարգ, որի արխետիպը ամենից լավ պահպանվել է 989թ. Էջմիածնի Ավետարանում, և որ խորանները ներկայացնում են դրախտը: Մինչդեռ, մեր համոզմամբ, այդ համակարգը սիմվոլիկ ձևով ներկայացնում է ոչ թե դրախտը, այլ Հին և Նոր կտակարանների խորիրդաբանությունը (այդ թվում՝ դրախտի), ինչպես ցույց են տալիս «Խորանների մեկնությունները»:

Հայկական, հունական, վրացական մի քանի խորանապատկերների օրինակներով կարելի է ցույց տալ այդ պատկերախորիրդաբանության (իկոնոլոգիա) տարբեր արտահայտությունները:

## Արշալույս Ղազինյան /Երևան/

### ՍՈՂՈՄՈՒԻ ԱՌԱԿՆԵՐԻՑ ՄԵԿԻ ՄԱՇՏՈՑՅԱՆ ԹԱՐԳ-ՍԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1. Մաշտոցի կենսագիր Կորյունի վկայությամբ, հայերեն տառերը Սամոսատում հույն գեղագիր Հռովիանոսի օգնությամբ ձևավորելուց հետո, Մաշտոցն իր երկու աշակերտների՝ Հովհան Եկեղեցացու և Հովսեփ Պաղնացու հետ «ի թարգմանութիւն դառնային»՝ ընտրելով Սողոմոն Խմաստունի Առակների գիրքը. «Եւ եղեալ սկիզբն թարգմանելոյ զԳիրս նախ յԱռակացն Սողոմոնի, որ ի սկզբանն իսկ ծանօթս իմաստութեանն ընծայեցուցանէ լինել, ասելով՝ եթէ «Ճանաչել զիմաստութիւն և զիսրատ,

իմանալ գրանս հաճարոյ»:

2. Ի տարբերություն այլաբանական, բանահյուսական կամ գրական սյուժետային առակի՝ Սողոմոնի գիրքն առածների, ասույթների, խրատների ժողովածու է՝ մարդկային կենսափորձով հաստատված իմաստությունը սերունդներին փոխանցելու համար։ Մաշտոցը խորապես գիտակցված է ընտրել այդ գիրքը։

3. Թե որ լեզվից է Մաշտոցը թարգմանել Սողոմոնի առակները, Կորյունը ոչինչ չի ասել։ Աստվածաշնչի առաջին թարգմանությունը կատարվել էր շուտափույթ, ուստի զգացվեց նոր թարգմանության կարիքը։ 434թ. կոստանդնուպոլսից վերադարձան Սահակ Պարթևի և Սեսրոպ Մաշտոցի աշակերտները, որոնք իրենց հետ բերին Աստվածաշնչի «Յոթանանից» կոչված հունարեն թարգմանության ընտիր օրինակներ, և թարգմանելու ժամանակում եղան առաջին թարգմանության ճշտման, սրբագրման և վերստին թարգմանության գործին։

4. Սողոմոնի առակների ԺՀ գլխի 19-րդ առակը տրամադրեն հակադիր իմաստ ունի տարբեր լեզուներով կատարված թարգմանությունների մեջ։ Մի դեպքում՝ այն վերլարելում է եղբոր նկատմամբ եղբոր ունեցած ատելությանն ու թշնամանքին, մյուս դեպքում՝ նրանց սիրո և համերաշխության զգացմունքին։ Ակներև է, որ թարգմանությունների տարբերությունը ծագում է բնագրերի տարբերություններից։ Ահա եքրայերեն բնագրի անգլերեն բառացի թարգմանությունը։ An offended brother is more unyielding than a fortified city, and disputes are like the barred gates of a citadel - Վիրավորված եղբայրն անմատչելի է ավելի, քան ամուր քաղաքը, և վեճերը նման են միջնաբերդի դարպասների նիգերին։

Ոճաարտահայտչական տարբերություններով հանդերձ, այս բովանդակությամբ են թարգմանված անգլերենը, ֆրանսերենը, գերմաներենը, ռուսերենը։

5. Առակի հունարեն, ասորերեն, լատիներեն և հայերեն թարգմանությունները բովանդակությամբ հարում են իրար և, անպայման, եքրայերենում ունեցել են այլ բնագիր։

Հայերեն. «Եղբայր յեղբօրէ օգնեալ՝ իբրև զքաղաք ամուր և բարձր. և հզօր է՝ իբրև զհաստատեալ բազաւորութիւն»։

Հստ այլ տարբերակի՝ այսպես է. «Եղբայր յեղբօրէ օգնեալ՝ իբրև զքաղաք ամուր, և զօրացեալ բարձրացեալ՝ իբրև զքազաւորութիւն հաստատեալ»։

6. Ակներև է, որ հայերենը թե՛ բովանդակությամբ և թե՛ շարահյուսորեն ներդաշն է հունարենին։ Թարգմանությունը կատարված է ըստ բառացի նյութական թարգմանության սկզբունքի։ Եվ բնական է, որ Մաշտոցը թարգմաներ հունարենից՝ Սամոսատում։ Մաշտոցյան թարգմանությունը,

սակայն, ասորերենից լատիներենից և այլ թարգմանություններից էապես տարբերվում է Յասիլետոն բառի թարգմանությամբ: Բառը հունարենում ունի մի քանի նշանակություն, և դրանք արտացոլվել են տարբեր լեզուներով թարգմանություններում. թարգմանել են՝ արքայական պալատ, դղյակ, միջնաբերդ, քաղաք, պատվար, աշտարակ և այլն: Ըստ Ի. Շվորեցկու «Հին հունարեն-ռուսերեն բառարանի» Յասիլետոն բառն ունի նևև «թագավորական իշխանություն», «թագավորություն» իմաստը:

7. Իր թարգմանության մեջ Մաշտոցը խորաքափանցորեն նախընտրել է «թագավորություն» նշանակությունը, և դա վկայում է ոչ միայն հունարենի նրբերանգների նրա իմացության մասին, այլև դրա մեջ արտահայտվել է Մաշտոցի քաղաքական հեռամետ և բարձր ինքնագիտակցությունը: Եղբոր օգնությունը եղբորը՝ իբրև բարոյական առաքինություն, նաև կենցաղային խրատի ոլորտից բարձրացնում է ազգային միասնության գաղափարին, հայրենի թագավորությունը հզոր և հաստատուն պահելու վսեմ պատճամի: Եվ այս պատճամը կենսականորեն որքան ճշմարիտ էր իր ժամանակի համար, նույնաբան էլ ճշմարիտ է և իմաստուն այսօր՝ աշխարհասփյուռ հայ ժողովրդի համար:

## Արշակ Մադոյան /Երևան/

### ՈՒՂԵԳՐՈՒԹՅԱՆ ԶԵՎԱՎՈՐՈՒՄՆ ԻԲՐԵՎ ԳՐԱԿԱՆ ՏԵՍԱԿ /ԺԵ-ԺԸ դդ./

1. Մեսրոպյան դպրության սկզբնական շրջանում գրական տարբեր տեսակներ «համադրված» էին հանդես գալիս (սինկրեսիզմ): Դա նկատելի էր հատկապես պատմագրության մեջ, որը կյանքը ներկայացնում էր առավել լայն ընդգրկումով և աշքի էր ընկնում հարուստ բովանդակությամբ:

Գրական այլազան դրսևրումների մեջ քիչ չեին նաև ուղեգրական հատվածները, որոնք երբեմն հնարավոր է առանձնացնել և ստանալ դասական իմաստով ուղեգրությունը:

2. Ուսումնական, վաճառականական ճանապարհորդությունները, ուխտագնացությունները առաջադրում էին աշխարհագրական բնույթի բնագրերի անհրաժեշտություն (Աշխարհացոյց, Ֆանկ քաղաքաց, Մղոնաշափոր և այլն), որոնք նույնապես որոշակի շփման կետեր ունեին ուղեգրության հետ:

3. Ուղեգրությունն իր հերթին կարող էր պարունակել գրական ուրիշ տեսակների տարրեր, բայց դա նախնական համադրությունը չէ, այլ՝ տե-

սակների փոխներթափանցման օրինաշափություն, որ գործել և գործում է բոլոր ժամանակներում: Սիմեոն Լեհացու ուղեգրության մեջ, օրինակ, կա ողբ, գովք, քնարական զեղում, որոնք յուրաքանչյուր մասնավոր պահի՝ հեղինակի ունեցած տրամադրության արտահայտությունն են:

4. Աւելեգրության տեսակին պատկանող մեզ հայտնի առաջին երկը Մարտիրոս եպս. Երգնկացունն է (ԺԵ դարի վերջ): Նրան հաջորդեցին ուղեգիրներ, որոնք բավականաշափ հայտնի են բանասիրությանը և նույնիսկ նրանց մի մասը թարգմանված է այլեւայլ լեզուների: Բայց քանի դեռ հիմնովին ուսումնասիրված չէ հայ ձեռագրերի աշխարհը, նույնիսկ կատարված չէ ամբողջական ցուցակագրություն, բացառված չէ, որ կհայտնվեն նոր տեղեկություններ, որոնք կհարստացնեն մեր պատկերացումները տվյալ խնդրի վերաբերյալ:

5. Ուղեգիրները ճանապարհորդում էին տարբեր կարգավիճակով վաճառական, քաղաքական բանագնաց, ուխտավոր: Լինուած էին նաև ստիպողական ուղեգրություններ (Օգոստինոս, Բագենցը, օրինակ, ԺԵ դ. սկզբին հայրենիքի անապահով վիճակից դրդված անցավ Եվրոպա): Սրանք գործուներ են, որ մեծապես պայմանավորում էին ուղեգիրների տված գնահատականները, վերաբերմունքը նկարագրվող երկրի նկատմամբ. մեկը չեզոք պատմող է, «լուսանկարչական» ճշգրտությամբ վերաբերում է տեսածն ու լսածը, մյուսի տպավորությունները ենթակայական են, մեկ ուրիշի ելակետն ու գնահատության չափանիշները թելադրված են հայրենի իրականությամբ, չորրորդը լոկ կրոնական հետաքրքրություններ է ցուցաբերում: Հեղինակային վերաբերմունքը թերևս ոչ մի գրական տեսակի մեջ այնպես վճռական նշանակություն չունի, ինչպես՝ այստեղ:

6. Հայկական ուղեգրությունները (արձակ թե չափածո) պատկերել են Ասիայի ու Եվրոպայի բազմաթիվ երկրներ, դրանց վերաբերյալ հաղորդել պատմաշխարհագրական, ժողովրդագրական, վիճակագրական տեղեկություններ, ցույց տվել անցած երթուղին, քաղաքների ու սրբավայրերի հեռավորությունը, ազգաբնակչության լեզվի ու կենցաղի ինչ-ինչ համգամանքներ և այլն, այդ ամենը հաճախ համեմատելով իրար կամ հայ իրականության հետ: Ավելի հաճախակի նկարագրված են Պատեստինի, Իտալիայի և Հայաստանի սրբավայրերը:

7. Նույն դարաշրջանում Եվրոպայում ուղեգրությունները և գրիվում էին և գտնում բավականին լայն արձագանք: Ի տարրերություն ուրանց, հայկական ուղեգրությունները պահպանվել են եզրակացույն դեպքում երկու օրինակով և, ըստ էության, միջնադարում մեր երել են աննկատ: Ուղեգիրները մեծագույն մասամբ ծանոթ չեն եղել իրենց նախորդների գործերին:

8. Մեզ գրադացնող երկերը գրված են բազմազան ձևերում, մերք ինք-

նակենագրության մերք հիշատակարանի կամ օրագրության, մերք ուղեցույցի տպագրություն են բողնում: Հովհաննես Տիգրանակերտցին բավական երկար մտորել է իր ուղևորությունը գրի առնելու մասին.և ի վերջո ընտրել է նամակի ձևը:

9. Ուղեգրությունների մեջ տեսնում ենք հայ մատենագիրների պատմական, աշխարհագրական պատկերացումները, նրանց անձնական կարողություններն ու նախասիրությունները: Այդ ստեղծագործություններից շատերը ճանաչողականից բացի ունեն նաև գեղագիտական արժեք:

## Արտաշես Մաքեոսյան /Երևան/

### ՀԵԹՈՒՄ ԹԱԳԱՎՈՐԻ ԾԱՇՈՅԸ

Զեռագիրը բարդ հուշարձան է: Այն միավորում է գիտության, արվեստի և հմտությունների տարրեր, որոնք հասարակական կյանքի զարգացման հետ կատարելագործվում և ստեղծում են որոշակի մակարդակ, որի արդյունքն է ձեռագիրը: Ուստի ամեն մի ձեռագիր պետք է ուսումնասիրել որպես ամբողջական հուշարձան, անկախ այն բանից, թե ուսումնասիրողին հետաքրքրում է նրա այս կամ այն կողմը, գիրը, կամ բնագիրը, նկարը, կազմը կամ պահպանակը: Ամբողջական ուսումնասիրություն է անհրաժեշտ մանավանդ, երբ անհայտ են նրա ստեղծման հանգամանքները:

Այդպիսի մի հուշարձան է Մատենադարանի 1286 թ. գրված թիվ 979 ձեռագիրը, որը հայտնի է «Հեթում թագավորի ճաշոց», ստացող՝ Հեթում Բ թագավորի (1289-1305թթ.) անունով: 1283թ. նա՝ Լևոն Գ թագավորի անդրանիկը, ձեռնադրվել էր ձիավոր (ասպետ) և դարձել մոր՝ Կեռան թագուհու օժիտ Լամբրոնի, Սկեռա վանքի և շրջակայքի տեր-պարոն:

Անհայտ են ձեռագրի գրիչն ու ծաղկողը, տեղը, թերթերի ու նկարների ճիշտ քանակը, ճաշոցի կառուցվածքում կատարված որոշ փոփոխությունները և դրանց պատճառը: Այն մեզ է հասել 474 մագաղաթյա և երկու թղթյա թերթերպ, երեք տասնյակից ավելի ամբողջական էջեր գրաղեցնող նկարներով, հարյուրավոր լուսանցազարդերով, գլխազարդերով և հազարից ավելի զարդագրերով, ինչպես և ամբողջական հիշատակարանով: Ճաշոցը տպագրվել է դեռևս 1686 թ., Վենետիկում, Թաղեռու երեց Երևանցու ջանքերով: Վենետիկից վերադարձվելիս գերվել է, և կազմն ու որոշ նկարագարդ էջեր թալանվել են: 1693 թ. փրկագնվել է և 1694 թ. նորոգվել ու կազմվել է և այդպես հասել մեզ:

19-րդ դարի սկզբներին Հեթումի ճաշոցն արդեն Ս.Էջմիածնի Մատենադարանում էր: 1872 թ. և 1879 թ. վերստին իրատարակվել է Վաղարշ-

## պատու

Զեռագրի նքանչելի նկարագրումներն իրենց վրա են բևեռել ձեռագրագետների ու արվեստաբանների ուշադրությունը (Գ. Հովսեփյան, Մ. Տեր-Մովսիսյան, Ռ. Դրամփյան, Լ. Կուրսով, Լ. Ազարյան, Ս. Տեր-Ներսիսյան, Ի. Դրամփյան): Նրանցից ոմանք այն համարել են Թորոս Ռոսլինի ձեռքի գործ, ոմանց համար ծաղկողն անհայտ է, գրչության վայրը։ Ակների վաճքը: Հիմնվելով հիշատակարանի այն հաղորդման վրա, որ ճաշոցը նվիրում են իրենց տիրոջը, իսկ ձեռագրի ստացող Հեթումը Սկեռա վաճքի պարոնն էր, գրչության վայրը համարում ենք Սկեռայի վաճքը։

Զննությունները մեզ բերին այն համոզման, որ

ա. Զեռագիրը գրվել է Հեթում Արքայորդու տիրույթի մշակութային կենտրոն Սկեռայի վաճքում։

բ. ճաշոցի գրիչը Սկեռայի վաճքի նշանակոր գրիչ Ստեփանոս քահանան է, որի ձեռքով գրված մի տասնյակի հասնող ձեռագրեր են պահպում Մատենադարանում։

գ. ճաշոցի խմբագրական որոշ շեղումների, հիշատակարանի հեղինակը, ինչպես նաև նկարագրողը Սկեռա վաճքի բարունապետ մեկնիչ, գրիչ, գրչության արվեստի տեսաբան, նկարիչ, գանձագիր, խմբագիր, Լևոն Գ թագավորի խորհրդատու և նրա որդու բարեկամ և ուսուցիչ Գևորգ Սկեռացին է։

դ. Գևորգ Սկեռացու հրաշակերտած «խրախճանութիւն մարմնաւոր և անմահական փարթամութիւն» ճաշոցը Հեթում արքայորդու համար ապաշխարության ու երդումի «խրատ ու վարդապետութիւն» էր արքայական գահին հասնելու ճանապարհին։

Կառլեն Միրումյան /Երևան/

## ԶՐԻՍՈՆԵՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՆԴՐԱԿԱՐԳԸ

Սասանյան Պարսկաստանի նվաճողական քաղաքականության հետևանքով, Գ դարի երկրորդ կեսին Հայատանում անհրաժեշտ էր վերականգնել և ամրապնդել կենտրոնացված թագավորական իշխանությունը, միավորել ազգի բոլոր հատվածները և սոցիալական շերտերը միասնական, համակարգված գաղափարախոսությամբ, ընդիանուր ազգային խնդիրների շուրջ։ Ընդ որում, կենտրոնացված իշխանության, պետության ամբողջականության և ազգային ինքնության գաղափարները պետք է դիտվեին իբրև նույնական։ Մինչդեռ երկրում իշխող բազմաստ-

վածությունը իրոև աշխարհայացք և գաղափարախոս: Առմա-  
կան նոր պայմաններում ի վիճակի չէր նպաստել ծառացւ: Խայիրների  
լուծմանը: Այդ պահանջներին առավելագույնս բավարարութեան հզորա-  
ցող քրիստոնեությունը՝ իր ընդգծված միաստվածյա բնույթով, որու էլ Տր-  
դաս Գ Սեծի գահակալումից (298թ.) քիչ անց՝ 301 թ., Հայաստանում պե-  
տական կրոն հռչակվեց:

Մինչև Թեոդոս Ա-ն, հռոմեական կայսրերը «ոլորապտութ քաղաքա-  
կանություն» էին վարում քրիստոնեության նկատամբ: Միայն 395 թ. Թեո-  
դոսը քրիստոնեությունը միակ պաշտոնական կրոն հռչակեց կայսրության  
ամբողջ տարածքում: Քրիստոնեության ընդունումը հայերին մերձեցրեց  
կայսրության արևելյան մարզերի ժողովուրդների և եկեղեցիների հետ,  
որոնք ավանդաբար գաղափարաքաղաքական ընդիմության մեջ էին  
պաշտոնական Հռոմի նկատմամբ:

Թեև քրիստոնեությունը առավել տարածված էր կայսրությունում, այ-  
նուհանդերձ որպես պետական կրոն այն առաջին անգամ ճանաչվեց Հա-  
յաստանում: Այս շրջադարձային պատմական իրողությունը պայմանա-  
վորված էր մի շարք պատճառներով: Ազգի առաջնորդները համարժեք  
գնահատեցին տարածաշրջանում տիրող գաղափարական և քաղաքա-  
կան մթնոլորտն ու կոնկրետ իրավիճակները և, ըստ այդմ, ճիշտ կողմնո-  
րոշվեցին ազգի և պետականության ամբողջականության ամրապնդման  
և պահպանան գործոնի ընտրության հարցում: Այսեղ արտահայտվում  
է նաև առանցքային սկզբունքի՝ հոգևոր-գաղափարական գործոնի շեշ-  
տումը պետական քաղաքականության ընդհանուր համակարգում:

## Հասմիկ Մկրտչյան /Երևան/

### ՀԱՅԵՐԻ ԵՎ ՄԵԼՔԻՏՆԵՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԻՋԱԴԱՐՈՒՄ

Հայ առաքելական եկեղեցու և քրիստոնյա-արաբախոս հինգ եկեղե-  
ցական համայնքների (մելքիտ, հակոբիկ, նեստորական, դպտի, մարտոնի)  
միջև փոխհարաբերությունների պատմությունը դեռևս առանձին ուսում-  
նասիրության նյութ չի դարձել: Չեկուցումը նվիրված է նշված համայնքնե-  
րից մեկի՝ մելքիտների հետ առնչություններին միջնադարում: Հայկական  
և արաբական աղբյուրներում պահպանված տեղեկություններն այս մա-  
սին սուղ են և կցկատուր, թեև դրանց համադրումը, այնուամենայնիվ, հնա-  
րավորություն է տալիս որոշ պատկերացում կազմելու խնդրի մասին: Եղբ  
մելքիտները 9-րդ դարի սկզբին փորձ կատարեցին Հայաստանում արմա-

տավորեալ աղկեդոնական վարդապետությունը, ղիմադրության հանդիպեցին ոչ սխալն հայերի, այլև հակոբիկ (միաբնակ) ասորիների կողմից: Բոլորովին այլ վերաբերմունքի է արժանացել, սակայն, դավանանքով մելքիտ, հայտնի գիտնական, թարգմանիչ և բժիշկ Կոստա իրն Լուկա Բաղրեցին (820-912 կամ 913 թթ.), որին Հայաստան է հրավիրել իշխան Սենեքերիմը՝ հավանաբար, գիտական-թարգմանչական գործունեություն ծավալելու նպատակով: Շատ շանցած, Կոստա իրն Լուկան վախճանվել է և մեծ պատվով թաղվել Հայաստանում, ուր նրա գերեզմանի վրա դամբարան է կառուցվել՝ թագավորների և իովելոր առաջնորդների դամբարանների նման:

Մելքիտներին մեծ շափով՝ հետաքրքրել է Ազաթանգեղոսի «Պատմությունը» իր թե՛ ընդարձակ, թե՛ համառոտ («Վարք») խմբագրություններով: Պետք է ենթադրել, որ Ազաթանգեղոսի «Պատմության» հունարեն թարգմանված լինելու փաստը կարևոր դեր է խաղացել հունադավան մելքիտների մոտ հետաքրքրություն առաջացնելու գործում, որոնք էլ 9-10-րդ դդ.-ում այն հունարենից թարգմանել են արաբերեն:

Կիլիկյան Հայաստանում մելքիտների և հայերի փոխհարաբերությունների մասին մեզ հասած տեղեկությունները նույնապես քիչ են: Երբեմն կարելի է անուղղակի տեղեկություններ քաղել ձեռագրերի հիշատակարաններից, ինչպես, օրինակ, Ֆարաջ Ասորու «Բժշկարան ձիոյ» երկից:

Ուշ միջնադարում հայերի և մելքիտների փոխհարաբերությունները շատ ավելի սերտ են եղել, հատկապես Հալեպի հայկական գաղութում: Այդ մասին է վկայում, մասնավորապես, հայազգի Մուսսավարների տոհմի պատմությունը, որոնք եղել են դավանանքով մելքիտ և մի քանի սերունդ շարունակ իրենց կարևորագույն նպաստը բերել մելքիտ մշակութիւն:

Ալբերտ Մուշեղյան /Երևան/

## ԱԳԱԹԱՆԳԵՂԻՍԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՐԱԽԱՅՐԻՔ

Դավանաբանական հիմնարար դրույթներից մեկը, որը կովան կարող է ծառայել Ազաթանգեղոսի և Կորյունի բնագրերի պատմաբանասիրական կնճիռը լուծելու համար, Ազաթանգեղոսի գրքի՝ Գրիգոր Լուսավորչի Վարդապետության մեջ արծարծված սուրբ օծության խորհրդապաշտական ավանդների փոխանցման հիմնադրույթն է, ավանդներ, որոնք ըստ Աստվածաշնչի, Աստված հանձնեց Մովսես մարգարեին և որոնք Աքրա-

համի սերունդների միջոցով փոխանցվեցին մինչև ավանդապահ Հովհաննես Սկրտիշը /Ազաթանգեղոս, § 431, 433, 435/: Այնուհետև ժառանգության ավանդապահ Հովհաննեսը այդ սրբազան ավանդները՝ քահանայությունը, օծությունը; մարգարեղությունը և թագավորությունը հանձնեց Փրկիչ Քրիստոսին, Քրիստոսը տվեց առաքյալներին, իսկ առաքյալները՝ եկեղեցու ժառանգներին (Եկեղեցւոյ մանկանց, Ազաթանգեղոս § 463): Սրանով վարդապետության հեղինակը հաստատում է Գրիգոր Լուսավորչի առաքելության շնորհը որպես առաքյալներին հաջորդած եկեղեցու ժառանգի:

Ըստ այսմ՝ Վարդապետության մեջ ոչ միայն նույնանման արտահայտություններով են նկարագրված հեթանոս ժողովրդին նոր հավատի բերելու համար Հիսուսի և առաքյալների կատարած գործերը՝ աշխարհը ջրով և Սուրբ հոգով սրբելը, հեթանոսներին քարոզելը, ախտավորներին բժշկելը, մարդկանց սուրբ ավագանում մկրտելը և այլն, այլև՝ Ազաթանգեղոսի Գգրքում պատմելով Հայաստանում Գրիգոր Լուսավորչի ծավալած առաքելական գործունեության մասին, Պատմության հեղինակը Վարդապետությունից քաղած համանման արտահայտություններով էլ վերարտադրում է Գրիգոր Լուսավորչի ծեռքով հեթանոս հայերին բժշկելու, քարոզելու, ջրով ու Սուրբ հոգով մկրտելու, վաճականներ հաստատելու, քահանաներ և եալիսկոպոսներ ծեռնադրելու դրվագները:

Խորհրդապաշտական ավանդների փոխանցման կանխադրույթը հիմք ընդունելով էլ, Ազաթանգեղոսի Պատմության հեղինակը Բ և Գ գրքերում բազմաթիվ դրվագներ շարադրել է «Քրիստոս-առաքյալներ-Ա-Գ» եռաստիճան սխեմայով: Եվ չնայած, որ այդ դրվագներն իրարից շատ հեռու են ընկած, այնուհանդերձ դրանցում առկա դարձվածքների և ոճերի հետևողական կրկնությունը որևէ կասկած չի թողնում, որ շարադրողն ամենուրեք առաջնորդվել է հիշյալ եռաստիճան ավանդատվության կանխադրույթով:

Իր հերթին Կորյունը Մաշտոցի վարքը շարադրելիս, Հայաստանի գավառներում, Վիրքում և Աղվանքում իր ուսուցչի ծավալած գրաստեղծ և վարդապետական գործունեությունը ցույց տալու համար, նույնությամբ փոխառել է Ազաթանգեղոսի Գ գրից Գրիգոր Լուսավորչի գործունեության համապատասխան դրվագները; որոնք շարադրված են Վարդապետության 458-րդ պարբերությամբ սահմանված ավանդների փոխանցման կանխադրույթի համաձայն: Եվ ուրեմն, նշված դավանաբանական հիմունքով և Ազաթանգեղոսի, և Կորյունի բնագրերի փոխառնչության խնդիրը լուծվում է հօգուտ Ազաթանգեղոսի

## «ԱՐԵՒԵԼԵԱՆ» ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԱՅՑ» ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԱՌԱՋԱՇՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ

1. Ի հասական իմաստով «Արևմտյան» է Բյուզանդական (կայսերական) ուղղափառ (իունադավան) եկեղեցին: Կաթողիկե եկեղեցու առանձնացումից հետո «Արևմտյան»-«Արևելյան» որակումը ձեռք է բերում նոր, ինչ-որ շափով տեխնիկական իմաստ, ուստի բյուզանդավոնական ուղղափառությունը սկսում է դիտվել իբրև «Արևելյան եկեղեցի»:

2. Բուն Արևելյան եկեղեցու շրջանակներում ազգային և կրոնական պատկանելությունները սերտաճել են: ազգային նկատվող եկեղեցուն չպատկանելը հավասարագոր է այլազգի լինելուն: Այդպիսին է հայերի, ասորիների, ղպտիների, հարեշների էթնոդավանական ընկալումը:

3. Արևելյան եկեղեցին գերազանցապես հայեցողական է, աստվածաբանությունը՝ առավելաբար խորհողական, ուր դավանաբանությունն ու փիլիսոփայությունը լրացնում ու բացատրում են միմյանց: Արևմտյան եկեղեցու կարգապահական կեցվածքն ու օրենսգիտական աստվածաբանությունը խորթ չեն, բայց և բնորոշ չեն Արևելյան եկեղեցուն:

4. Տարբեր են Արևելյան և Արևմտյան եկեղեցիների նվիրապետական ընկալումները: Տիեզերական քահանայության գաղափարը Արևելյան եկեղեցին չի առնչում նվիրապետական առանձնությանը, որի բարձրագույն հեղինակությունը եպիսկոպոսական ժողովն է:

5. Հայաստանյայց եկեղեցին, երկրի քաղաքական-վարչական կացության թելադրանքով, նախապատվությունը տալիս է Ազգային եկեղեցական ժողովին, ժողովրդյան ընտրյալների մասնակցությամբ:

6. Խորհուրդների կատարումը Արևելյան եկեղեցին լիարժեք ու ընդունելի է նկատում, պատարագողից բացի, ժողովրդյան մասնակցությամբ, ուստի մերժում է թիվ կամ անձայն պատարագի գաղափարը: Մասնակցության եղանակը խորհուրդների հարուցած ձայնավոր արձագանքն է. դիրքի փոփոխությամբ ունկնդրելը, խաչակնքումը: Պատարագը միասնական գործողություն է և ոչ մտերմիկ հանգամանք:

7. Խորհուրդների վավերականությունը ապահով է, երբ պատարագը եկեղեցու մեջ է մատուցվում, քանի որ այն է Աստծո տունն ու Սուրբ հոգու անկաշկանդ գործելատեղին: Շնորհաց փոխանցումը կատարվում է միայն խորհուրդների կատարմամբ, սակայն կորսված չէ այն անձը, որ գրկած է շնորհներ ստանալու կարելիությունից:

8. Հացի և գինու մեջ Արևելյան եկեղեցին քրիստոսի իրական, բայց անբացատրելի, ներկայություն է տեսնում, ուստի մերժում է գոյացափո-

խության գաղափարը: Վերջին պարագայի հետ է կապված մարդեղության և չարչարանաց մեկնաբանության տարբերությունը Արևելքի և Արևմուտքի եկեղեցիներում:

9. Արևելքի եկեղեցիները հետևորդ են 431թ. Եփինոսի ժողովում ընդունված Կյուրեղ Աղեքանդրացու բանաձևումին՝ «Մի բնութիւն բանին մարմնացելոյ»: Ըստ այդմ Զրիստոսի անձը անջատ էությունների միասնություն չէ, այլ ներդաշնակ ամբողջություն:

10. Եկեղեցու տիեզերականությունից հետո առաջ եկած վարդապետությունները (քավարան, ներողություն, պապական իշխանություն) ընդունելի չեն Արևելյան եկեղեցիների համար: Մասնակիորեն տարբեր է նաև երկրորդ գալստյան մեկնաբանությունը:

11. Առավել շոշափելի են ծիսական կարգի տարբերությունները (Ծնունդ և Սկրտություն՝ միասնաբար, Առաջավորաց տոն, Վարդապառ և Վերափոխում, բաղարջ հաց և անջուր գինի և այլն):

12. Արևելյան եկեղեցին փրկության հույսը չի կապում նվիրապետական պատկանելության հետ: Հանդուրժելի է համարում խորհուրդների կատարման զանազանությունը և վավերական է նկատում այն: Հայատանյաց եկեղեցին ծեռնպահ է իր ընկալումները թելադրելուց, ծիսական տարբերությունը զանազանում է դավանականից, ազգային նկարագիրն ու ոգին արգելք չի համարում «միութիւն ի կարևորս» նշանաբանով գործելու համար:

## Հայր Սերոբ Չամուրլեան /Երևան/

### ՆԵՐՍԵՍ ԼԱՄԲՐՈՆԱՑԻԻ «ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՍԱՂՄՈՍԱՅ»-Ի ԶԵՌԱԳԻՐՆԵՐԸ

Մասուէլ Սկևորացի 1190 թ. կ'աւարտէր առաջին օրինակութիւնը Ներսէս Լամբրոնացիի «Սաղմոսներու մեկնութեան» մեծածավալ աշխատութեան, անոր կցելով հիշատակարան մը եւ «Պատմութիւն վարուց Ներսիսի եպիսկոպոսի երգոցն Սաղմոսիս քննողի» վերնագիրով համառոտ կենսագրութիւն մը, որ հետաքրքրական տեղեկութիւններ կը պարունակէ մեր քննած աշխատութեան յօրինումին եւ օրինակութեան շուրջ:

Երիտասարդ հասակին Լամբրոնացի փորձառութիւն առած էր ձեռագիրներու տարաբախտ վիճակին, յատկապէս երբ իր աշխատութիւնները կը յափշտակուիին 1187-ին Հռոմեայ ճամբորդած ժամանակ, ուստի «զգուշացեալ զի մի եւ այս «Մեկնութիւն Սաղմոսիս» յիրիք շփոթմանէ, որ իւրն է զիր պակասեսցէ եւ հաւասարն ոչ մնասցէ, յորդորեաց զկրօնակից եղբայր

Ինքը գԳեորգ սկսանել եւ գրել. եւ նա յօժարութեամբ յանձն էառ, պատրաստեաց զնիւթն և սկիզբն արար: Իսկ ապա վիութացուցեալ իշխանական իրամանն զճանապարհն՝ որ առ ինքնակալն Հռոմայ թագաւորն Ալամնաց ճանապարհակից էառ իւր գԳեորգ, եւ ինձ Սամուելի նուաստի իրաման ետ զսկսեալն ի նմանէ աւարտել, զոր յօժարութեամբ յանձն առի եւ պինդ հաւատով ի վիաս Աստուծոյ կատարեցի ի քուիս ՈԼԹ (630=1190): Այս ամբ երեք են կործանման սուրբ տեղեացն Երրուսաղեմի» (Ալիշան, Հայպատում, Ս. Ղազար, 1901, էջ 417: Հմմտ. Գ. Յովսէփեանց, Յիշատակարանք ձեռագրաց, Անթիլիաս, 1951, սինակ 548-549):

Այսպէս, Լամբրոնացիի խոհեմութեան կը պարտինք առաջին օրինակը իր գրութեան, որ այժմ կը հանգչի Ս. Ղազարի Մատենադարանը, եւ որու մէջ գիրերու տարբերութեամբ յստակ կը տեսնուի Գեորգ Վարդապետի եւ Սամուելի՝ վիխանակութեան տեղը (ԻՔ սաղմոսի վերջաւորութեան), ուր կը գտնենք նաեւ սինակ մը Էամբրոնացիի ինքնազիր օրինակութեան: Հոս պետք է յիշել, որ գործին մէկ չորրորդ մասը միայն Գեորգ յաջողած է կատարել, ծանրագոյն մասը վստահելով Սամուելի:

Լամբրոնացի քսանվեց տարեկանին կը սկսի գրի առնել սաղմոսներու բացատրութիւնը եւ երեք տարուայ մէջ զայն կ'ամբողջացնէ «Իսկ հոգեւոր հայրն իւր եւ դաստիարակն Յոհաննէս ի նստելն երբեմն երբեմն առ նմա՝ քններ զմիտս Սաղմոսացն եւ ի լուծանելն՝ աղաչէր գրել զնոյն եւ քողով ի պէտս զկնի եկելոցն: Յայնժամ ըստ կամացն Աստուծոյ եւ ըստ հնագանդութեան խորհուղին՝ սկիզբն արարեալ գրել զքննութիւն երգոց Սաղմոսին ի շրջանս աւուրց ամաց իւրոց քսան եւ վեց քուոյ եւ քուականիս վեցհարիւր քսան եւ եօթանց (1178), եւ կատարեալ ի քսան եւ ինն ամն» (Հայպատում, էջ 416):

Ներկայիս, մօտաւորապէս յիսուն ամբողջական օրինակ կարելի է գտնել պահուած զանազան մատենադարաններու մէջ: Թուականներն ստուգելով՝ կը տեսնենք, թէ քոլոր դարերու ընթացքին կատարուած են ամբողջական եւ մասնակի օրինակութիւններ, մինչեւ իսկ տպագրութեան պատրաստութիւն մըն ալ տեսած է Յովհաննէս Վրդ. Ամասիացին 1758-ին Ամստերդամի մէջ կատարելիք, որ սակայն քնաւ չէ իրագրծւած (Մայր Յուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Սիսիթարեանց ի Վենետիկ, հու. Զ, Ս. Ղազար, 1996, 1166, ձեռ. թիւ 1013):

Ս. Ղազարի Մատենադարանին մէջ կը պահուին չորս ամբողջական եւ ընտիր օրինակ, Ս. Յակոբի վանքը ունի տասը օրինակ Սաղմոսամեկնից, որոնցմէ երկութը թերի, իսկ Երևանի Մատենադարանի ցուցակներուն մէջ քսանինգ օրինակ կը գտնենք:

Համեմատել այս ձեռագրային աւանդը, ջանալ վերակազմել ձեռագրախմբերը ներքին եւ արտաքին փաստերու վրայ հիմնուելով՝ ահա այս

պիտի ըլլայ մեր ներկայ գեկուցումին նիւթը:

Պավլիկ Չոբանյան /Երևան/

## ԱՆԱՍՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՀԵՐԱՊՈԼՍԵՅՈՒ «ՎԱՍ ՎԱՆՈՐԵՒՅ, ՈՐ ՅԵՐՈՒՍԱՂԵՄ» ԵՐԿԸ ԵՎ ՆՐԱ ՊԱՏՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Վաղ միջնադարյան Զրիստոնյա Արևելքի կյանքում Երուսաղեմի դերը որքան հանրահայտ, նույնիքան և կարու է հետագա բազմակողմանի ուսումնասիրության: Եւ այդ վերաբերում է առաջին հերթին Երուսաղեմի ու Հայաստանի միջև բազմակողմ կապերի պատմության վերհանմանը, հայերի դերին Երուսաղեմում ու Երուսաղեմի դերին Հայոց եկեղեցու, նրա դավանության, ճարտարապետության ծևավորման գործում: Այն եղել է հայոց գրչական կարևոր կենտրոններից մեկը:

Երուսաղեմի գաղթօջախի պատմության վաղ միջնադարյան շրջանի ուսումնասիրության համար կարևոր հաղորդումներ ու վկայություններ են պահպանվել Անաստաս Վարդապետ Հերապոլսեցու անունով մեզ հասած ուղեգրական բնույթի թղթում, որտեղ տրված է Երուսաղեմի հայկական վանքերի ցուցակը ու թվարկված են այն հանգամանքները, որոնք դրդապատճառ են եղել ճանապարհորդությանն ու նշված ցանկը կազմելուն:

Բնագիրը գիտական շրջանառության մեջ է դրվել 19-րդ դարում և ունեցել մի շարք իրատարակություններ ու թարգմանություններ: Հեղինակի ու բնագրի մասին եղել են մի շարք տարակարծություններ: Այն թվագրվել է 7-8-րդ դարերով և կամ հայտարարվել անվավեր:

Բնագրի ուսումնասիրությունը մեզ բերում է հետևյալ եզրակացություններին::

1. Բնագիրը պահպանվել է հեղինակային երկու խմբագրությամբ և գրիշների հետագա հավելումներով ու բացատրություններով, որոնք համեմատաբար դյուրին է զատորոշել:

2. Բնագիրը ճշգրիտ է արտացոլում 6-րդ դարի երկրորդ կեսին և 7-րդ դարի սկզբներին Երուսաղեմում և ժամանակի Զրիստոնյա Արևելքում տիրող իրական քաղաքական ու դավանական կացությանը:

3. Բնագրում նշված վանքերի գոյությունը իրական է և վկայություն Հայաստանի ու Երուսաղեմի միջև գոյություն ունեցած սերտ կապերի:

## ԽԱԶԵԼԻՈՒԹՅԱՆ ԱՅԴԱՅԻՆ ԸՆԿԱԼՈՒՄՆ ՈՒ ՊԱՏԿԵՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՂ ՄԻՋՆԱԴՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

1. Հայաստանում քրիստոնեության ընդունմանը հաջորդած առաջին երեք դարերը առանձնաբնում են նոր գաղափարախոսության ակտիվ քարոզությամբ, որում կարևորվում էր ինչպես բանավոր և գրավոր խոսքը, այնպես էլ՝ «պատկերը»: Վաղ միջնադարյան տաճարների, դամբարանների և մեծաքիվ կոթողների բազմաբնույթ քանդակային հորինվածքները կոչված էին դիտորդի համար խաղալ այն նույն դերը, ինչ որ ընթերցողի համար խաղում էր գիրքը:

2. Քրիստոնեության ամենահիմնարար գաղափարներից մեկի՝ Քրիստոսի փրկագործական խաչելիության ներկայացումը պատկերման առողմով զգալի դժվարություններ էին հարուցում: Հին և «հզոր» աստվածներից դեռ վերջնականապես չհրաժարված նորընծա հավատացյալին հազիվ թե հատուկ ներշնչանք կարողանար հաղորդել «խաչված աստծո» կերպարը: Բնութագրական է, որ վաղ քրիստոնեությունն ըստ ամենայնի խուսափում էր խաչելիության ներկայացումից՝ այն փոխարինելով, օրինակ, Աքրահամի գոհարերության տեսարանով կամ Քրիստոսի դիմապատկերը կրող խաչով:

3. Վաղմիջնադարյան մի շարք հայ հեղինակների՝ խաչելիությանը վերաբերող գրվածքների և համաժամանակյա պատկերագրական նյութի քննությամբ կարելի է փաստել, որ խաչելիության փրկչագործական հեռանկարը պատկերագրորեն ներկայացնելու համար եկեղեցին ի վերջո ընտրեց ոչ թե պատկերը, այլ՝ նշանը, և այն սկսեց լրացնել «դիդակտիկ» մանրամասներով: Հիմք ունենալով մի կողմից Քրիստոսին և խաչելիությունը բնութագրող ավետարանական այգային ալեգորիաները (Քրիստոսին որպես ճշմարիտ որթ, վերին այգեպան, գինին որպես Քրիստոսի արյուն և այլն) և մյուս կողմից՝ ժողովրդական այգային դարավոր ավանդույթները (իդեալական աշխարհը որպես այգի, արքան որպես բարի այգեպան, գինին որպես ծիսական-անմահական հեղուկ և այլն) ըստ էության 5-7-րդ դդ. Հայոց եկեղեցու վարդապետները ստեղծեցին խաչելիությունը այգային «լեզվով» ներկայացնող ընդարձակ գաղափարախոսություն և դրան համահունչ պատկերագրություն: Ժամանակի թե՛ դավանաբանական երկերում, թե պատկերագրանդակներում խաչը հանդես է գալիս որպես տիեզերական ծառ-խաղողի որթ, որը երկինքը և երկիրը լցնում է իր պտուղներով որպես հնձան, որի վրա ճգմվում է Քրիստոս-խաղողը որպես երկնային այգու մողել և այլն:

4. Նման համադրությունը թույլ էր տալիս և՝ ընդհանրացնել-ժողովրդականացնել, և մասնավորացնել-անհատականացնել Քրիստոսի խաչելիության փրկագործական հեռանկարը։ Որպես արդյունք, խաչելիության այգային հորինվածքները տեղադրվում են թե՛ հանրության համար նախատեսվող տաճարների պատերին, թե՛ անհատական նահարձանների ու դամբարանների վրա։ Նման մոտեցումը խթանեց խաչային հորինվածքների լայն տարածումը Հայաստանում և մի քանի այլ գործոնների հետ միասին ծնունդ տվեց հայ մշակույթի ինքնության ամենաբնորոշ խորհրդանիշներից մեկի՝ խաչքարի առաջացմանը, որի հորինվածքը շարունկեց պահպանել խաչելիության՝ 5-7-րդ դդ. մշակված այգային զաղափարանությունն ու պատկերագրությունը։

Գրիգոր Պըլտեան /Փարիզ/

## ԲՆԻԿՆ ՈՒ ՕՏԱՐԸ Ե ԴԱՐՈՒ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵԶ

Այս աշխատութեան նպատակն է քննել օտարի դեմքերը եւ ասոնց հակադարձ բնիկը։ Ո՞վ է օտարը, ինչպէ՞ս կը տեսնուի ան, ո՞վ է բնիկը, ի՞նչ են այն յարաբերութիւնները, որոնք կը դրուին օտարին ու բնիկին միջեւ, ի՞նչ ծետվ կը յայտնուին ու կը գրուին անոնք Ե դարու հայ մատենագրութեան մէջ։ Անշուշտ, հակադրութիւն մը կապէ օտարն ու բնիկը, հակադրութիւն որ ունի իր լծորդները, հարազատն ու տարբերը, մօտիկն ու հեռաւորը, ներսն ու դուրսը։ Հակադրական այս բեւեռները կ'ենթադրեն սահման մը որ զանոնք կը բաժնէ՝ սահման մը, որ տեղեր կ'որոշէ եւ ի հարկէ կարելի կը դարձնէ նաեւ սահմանազանցումներ, որով օտարի խնդիրը նոյն ատեն տեղերու, պատկանելիութեան, արմատի եւ աքսորի հարցերը կը դնէ։

Հարցերու քննութիւնը մեզ կ'առաջնորդէ «զաղափարախօսական» երկու իրարու հակադիր ըմբռնումներու, որոնց հետքերը կարելի է գտնել Բուզանդարանի, Խորենացիի եւ Կորինի երկերուն մէջ։

Զեյմս Ռասել /Ջեմբրիջ/

## ԱՐՏԱԺՄԱՆ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹԻՒՆ

Սիցնադարեան մի հայրեն տաղում ներկայացւում է Հայր մեր աղօքի վրայ հիմնուած Ռուկեան և Սուրբիասեան նահատակաց աւանդութեան

վերամշակում. ըստ որում քրիստոնեութիւնը Հայաստան մուտք գործեց արդէն Արտաշիսի և Սատինկան օրօք՝ այսինքն մօտ երկու հարիւր տարի Ս.Ծննդենէ առաջ: Ըստ Մանիքէական սոգդերէն մի տեքստի, որը հայաբար թարգմանուեց ասորերէն բնագրից, քրիստոնեայ թագալրը գուցէ Երևանում կամ յամենայն դէպս ի Հայս, ուրանում է քրիստոնեութիւն և ընդունում է մանիքէական հայատը: Սոյն պատմութիւնը, քանի որ անկասկած արդէն գոյութիւն ունեցող քրիստոնեական առաքելական պատմութեան նախակերպարի վրայ շարադրուեց, իիմք է տալիս Ենթադրելու, որ հայկական աւանդութիւնը քրիստոնեական Առաքելոց մասին ի Հայս շատ աւելի իին է, քան ցայժմ Ենթադրուում էր: Սակայն հարց է մնում, թե ինչո՞ւ Առաքելոց ուղևորութիւնը կապում է հենց Արտաշիսյան տոհմի հետ, որ զուտ առասպել է: Երկու պատճառ եմ առաջարկում՝ մեկ, որ այսպես Արտաշիսեան հարստութեանը կապուած գերդաստանները նոյն քրիստոնեական համբաւ պիտի վայելէին, ինչպես Արշակունեաց, և երկու՝ որովհետև Հայոց դարձի ընդհանուր պատմութիւնը համապատասխանում է հնդկոպական ստեղծման եռաստիճան կառուցուածքին: Այսու Հայոց դարձի աւանդը ժողովրդի հնամենի հասարակական և կրօնական ըմբոնումների համաձայն Ենթարկուում է գրական ձևաւորման:

Մայա Ռափավա /Թքիլիսի/

## **ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԾԻՍԱԿԱՐԳԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՀԱԿԱՃԱՌԱԿԱՆ ԵՐԿԵՐԸ ԱՐՄԵՆ ԻՆԱԼԹՈՅՑԵՑՈՒ «ԴՈԳՍԱՏԻԿՈՆՈՒՄ»**

1. XI դարի նշանավոր մատենագիր և թարգմանիչ Արսեն Իղալթոյեցուն է պատկանում դավանաբանական-հակաճառական երկերի մի ժողովածո, որ հայտնի է «Դոգմատիկոն» վերտառությամբ: Այս ժողովածոյում կան մի քանի ստեղծագործություններ, որոնք բովանդակում են Հայոց Եկեղեցու ծիսական կարգերի դեմ ուղղված հակաճառություն:

2. Հակաճառությունը կատարված է հույն-վրացական ուղղափառության արարողակարգի դիրքերի:

3. «Դոգմատիկոնի» հիշյալ երկերը բարկացմանված են հունարենից, ուր հայտնի են իբրև Խսահակ կաթողիկոսին պատկանող գործեր: Այդ կարծեցյալ Խսահակի առաջին աշխատությունը աղբյուր է մյուս շորսի համար, իսկ երկրորդը՝ առաջինի մայր օրինակը:

4. Վրաց-հունական բնագրերի համեմատությամբ պարզվում է, որ հունարեն սկզբնագրերը վրաց իրականության մեջ որոշակի փոփոխութ-

յուններ են կյել, ուստի նրանք ներկայանում են իբրև անկախ երկեր:

Հասմիկ Սիմոնյան /Երևան/

## ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԵՐԿԵՐԻ ՔՐԻՍՈՆԵԱՑՍԱՆ ՀԱՍԿԱՐԳԸ ՄԻԶԱՎԴԱՐՅԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Միջնադարում Արևմուտքի և Արևելքի հետ մտավոր հաղորդակցության համար ինքնահատուկ մշակութային կամուրջ են ծառայել գեղարվեստական երկերի հայերեն քարգմանությունները:

Այլ դարաշրջանների ու ժողովուրդների գեղարվեստական գիտակցության մեջ թափանցելուն, սեփական հասարակության մտահորիզոնը ընդլայնելուն և դրանով իսկ համաշխարհային քաղաքակրթությունների վաղեմի պրժեքները ներկային ծառայեցնելու համազգային մտահոգություններով համակված միջնադարի հայ քարգմանիշների, հեղինակների ու խմբագիրների համար միանգամայն պարզ էր առաջադիր նպատակի իրագործման գլխավոր նախապայմանը՝ հուշարձանների հարմարեցումը տեղական պայմաններին, նրանց գաղափարական-գեղարվեստական նորովի խմբագրումը, վերամշկումը միջնադարի ոգով, արդիականացումը՝ հիմնականում քրիստոնեացման միջոցով:

Մեզանում գոյություն է ունեցել աշխարհիկ բովանդակությամբ քարգմանական գեղարվեստական երկերի քրիստոնեացման ուրույն, կուռ ու ճկուն համակարգ, որի իրականացնողները՝ Ֆրիկը, Խաչատոր Կեչառեցին, Գրիգորիս Աղքամարցին, Հովհաննի Սեբաստացին, Զաքարիա Գնունեցին և մյուսները ի զորու եղան հաղթահարելու համաշխարհային մի շարք գեղարվեստական սյուժեների՝ Աղեքսանդր Մակեդոնացու, Պղնձե քաղաքի, Փակուլ քազավորի, Մանկան և աղջկա, Աբու Շաֆարի և Շեմալիայի պատմությունների, այսպես կոչված, «պայմանական պատմականություն» և իրենց բանաստեղծական, արծակ և մանրանկարչական քազմաթիվ ներմուծումների, նպատակամետ սրբագրումների շնորհիվ դրանք ներդաշնակել հայ ընթերցողի գեղարվեստական պահանջմունքներին, քարոյական պատկերացումներին ու դավանական հայացքներին, որով և ապահովվեց հայկական միջավայրում նրանց, իբրև ապրող՝ ոչ միայն ընթերցվող, այլև՝ բերնե-բերան բանավոր պատմվող տարբերակների հարատեղումը, ընդիուպ մինչև 19-րդ դարի կեսերը:

Իր բնույթով կանոնականացված այս համակարգի բնորոշ գծերը համառոտակի կարելի է ներկայացնել հետևյալ պայմանական խմբերով.

ա) Գեղարվեստական եղանակների կիրառում, երբ հայ խմբագիրների կողմից շրջանառության մեջ դյուլած այլազան ձևերի շնորհիվ՝ աստվածաշնչյան կերպարներ ու ավետարանական կարգախոսներ, հարասությունների կաֆաներ, մանրանկարներ, հերոսների յուրատեսակ անձնավորում (պերսոնիֆիկացիա) և այլն, գործողությունները քննվում և գնահատվում են քրիստոնեական դավանության տեսանկյունից, իսկ գլխավոր հերոսն իր կյանքով դառնում է քրիստոնեական գաղափարների ուղղակի իլյուստրացիա:

բ) Արտագրական եղանակների կիրառում՝ Քրիստոսի կյանքի և Ալեքսանդրի կերպարի գուգաղիր քննություն, արձակ տնօրինականների, հիշատակարանների, առաջարանների և կրոնական բնույթի այլազան հատվածների կցում բուն շարադրանքին, որոնք, ի տարբերություն նախորդների, հետապնդում են սոսկ գաղափարական նպատակներ և, բնականաբար, գեղարվեստական խնդիրներ չեն վճռում:

Ժարգանական գեղարվեստական երկերի հայկական խմբագրությունները գնահատել լոկ կրոնական հայեցակետով ճիշտ չի լինի, քանի որ այն կնշանակի ճնշմարել երևույթի խորքային միտումը, քարնված ենթատեքստն ու գլխավոր նպատակը, որ և կազմում են Կեշառեցու, Աղթամարցու, Գնունեցու և այլոց աշխատանքի պատմական արժեքը՝ ստեղծագործական նպատակամետ և նրբին միջամտությունների շնորհիվ դեպի հայ ընթերցողը «անխոտորնակ ճանապարհ» բացելը կենսահաստատ, հերոսական ոգով օժտված դասական երկերի նորովի ընթերցման համար, ի շահ ազգային ու բարոյական նվիրական գաղափարների հաստատման:

## Օլգա Վարդագարյան /Հայաստան/

### «ՓԻԼՈՆ-ՔՐԻՍՏՈՆՅԱ» ԱԽԱՍՊԵԼԸ ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵԶ

Փիլոնի, առաջալների ժամանակակցի և զրուցակցի, քրիստոնեություն ընդունած երրայեցու մասին առասպելի հայերեն տարբերակի հիմնական աղբյուրները թարգմանական են: Սակայն այս տարբերակի առանձին մանրամասնությունները սյուժեի ինքնազարգացման արդյունք են երևում:

Ամենահետաքրքիրն այն է, որ հայ ավանդությունը ցույց է տալիս առասպելի շրջանառության ոլորտը. կապակցված ձևով «Փիլոն-քրիստոնյա» վիպակը շարադրվում է «պատճառներում»՝ տեղեկատվական բնույթի հոդվածներում, որոնք նախադրվում էին լուծմունքներին, իսկ հե-

տագայում վերամշակվում և ամփոփվում տարբեր ծաղկաքաղներում:

Կարելի է ենթադրել, որ և վաղ քրիստոնեական ավանդության մեջ այս առասպելի հիմնական տարրերը ձևավորվել են Փիլին Ալեքսանդրացու երկերի ուսումնական, բացատրական՝ ընթերցումների ընթացքում և միայն որոշ ժամանակ անց հատուկենու գրի առնվել տարբեր հեղինակների կողմից:

Վրեժ Վարդանյան /Երևան/

## ՏՐԴԱՏ ՄԵԾԻ ԱՎԱՆԴԵ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՍԱԿԱՐԳԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Հայաստանում քրիստոնեությունը պետականորեն ընդունելու հանգամանքը երկրի հոգևոր հեղաքեկան գործում վճռորոշ դեր վերապահեց Տրդատ Մեծ քաջավորին: Հայոց պետության հիմքերն ամրապնդելու համար անհրաժեշտ էր ստեղծել եկեղեցական ամրակութ նվիրապետական համակարգ, որը միասնական պետության ներսում պետք է ապահովեր միասնական եկեղեցի և կրոն: Կազմավորվող Հայոց եկեղեցին ենթակա էր Հայոց քաջավորի գերակայությանը:

Այն փաստը, որ Հայոց ավագանու ժողովում Տրդատ Մեծի կամքով Գրիգոր Լուսավորիչը, նախքան Կեսարիայում ձեռնադրվելը, կարգվեց Հայոց հայրապետ, վկայում է Կեսարիայում նրա ձեռնադրվելու ձևական, ծիսական բնույթի մասին:

Պետականորեն քրիստոնեության ընդունումը Հայոց կաթողիկոսին օժտեց պետական իրավագորությամբ՝ երկրի միասնական իրավակեցության ձևավորման ու պահպանման լայն գործառնությամբ:

Հայոց եկեղեցու նվիրապետական հիմքերի ամրապնդմանն էին նպատակառության նրան հողատիրույթներ հատկացնելու հետ առնչվող միջոցառումները: Տրդատի հրովարտակով հոգևորականությունը դասվեց ազատների կարգը՝ օժտվելով ապահարկությամբ: Թագավորը հոգ տարավ նաև եկեղեցու համար սպասավորներ պատրաստելու մասին:

Երկրում գլուխ բարձրացրած հեթանոսության դեմ պայքար ծավալելու համար Տրդատ III-ը Գրիգոր Լուսավորչի մահվանից հետո շարունակեց ամրապնդել Հայոց եկեղեցու նվիրապետական համակարգի հիմքը:

## ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԵՐԳԵՑՈՒԹՅԱՆ ԿՈՍՏԱՆԴՆՈՒԹՈՒԾԻ ՈՒԾՄԻԶՆԱԴՐՅԱՆ ԴՊՐՈՑԸ

1. Շարականութեալ համարվում են հայ հոգևոր երգեցողության ամենից կայուն ժամբը, որի կանոնական նմուշների տեքստային բաղադրիչը անփոփոխ հարատևել է մինչև մեր օրերը: Ինչ վերաբերում է շարականների երաժշտական բաղադրիչին, ապա ուշ միջնադարում, խազանշանների արվեստի անկման պայմաններում, այն ենթարկվել է տեղային տարբերակումների, որոնց հիման վրա առաջացել են ուշ միջնադարյան հոգևոր երգեցողության մի շարք ուրույն դպրոցներ, այդ թվում և Կոստանդնուպոլիսինը:

2. Այս դպրոցի առանձնահատկությունները քննվում են ըստ Եղիա Տնտեսյանի ձայնագրած Շարակնոցի՝ գրառված նոր հայկական կամ Լիմոնճյանի ձայնանիշերով: Վերջինս, բացի այս ձայնագրությունից, հեղինակել է նաև Չարչարանաց կամ Ավագ շաբաթի մի քանի շարականի երաժշտական բաղադրիչը:

3. Այս շարականները, Կոստանդնուպոլսի դպրոցի գլուխգործոցներ լինելով, հրատարկվել են ս. Ղազար կղզու ձայնագրյալ Շարակնոցի՝ Դ հատորում՝ եվրոպական ձայնանիշերով, Վենետիկի Սխիթարյան միաբանության անդամ հ. Ղևոնդ Տայանի ջանքերով:

4. Կոստանդնուպոլսի բազմազգ երաժշտական մշակույթը հարելով երգեցողության արևելյան ոճին, բնականաբար, որոշ չափով ազդել է նաև հայոց եկեղեցական երգեցողության վրա. սա առավելես վերաբերում է Համբարձում Լիմոնճյանի ստեղծագործություններին, որոնք բարդ ոճի ճոխ նմուշներ են:

5. Եղիա Տնտեսյանի Ձայնագրեալ Շարակնոցը հայոց եկեղեցական երգեցողության Կոստանդնուպոլսի դպրոցի ոճական առանձնահատկություններն արտացոլող համահավաք մի ժողովածու է, որը կոթողային արժեք ունի հայ երաժշտության ուսումնասիրման համար:

Քնարիկ Տեր-Ղավթյան-Արևշատյան /Երևան/

## ՔՐԻՍՏՈՍԻ ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ԱՎԵՏԱՐԱՆՆԵՐԻ ԱՐՏԱՅՈՒՔԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻԶՆԱԴՐՅԱՆ ԶՐՈՒՅՑՆԵՐՈՒՄ

Քրիստոսի մանկության երկու Ավետարաններից մեկը՝ Հակոբ Տյառ-

նեղոր Նախավետարանը, պահպանվել է հայերեն թարգմանությամբ («Անկանոն գիրք Նոր Կտակարանից», Վենետիկ, 1898), ունեցել է լայն տարածում և ազդել բանահյուսության վրա: Թովմայի անվամբ հիշատակվող Տղայության Ավետարանը, ինչպես և աղանդավորական շրջաններից սերող բազում պարականոնները, ըստ երևույթին, ոչնչացվել են:

Հայկական պարականոն զրույցների մեջ կան այնպիսիք, որոնց գուգահեռները բացակայում են մեզ հայտնի տպագիր և ձեռագիր պարականոն գրքերի մեջ:

Թովմայի Ավետարանի ասորահունական բնագրերի, գերմաներեն և ռուսերեն թարգմանությունների հետ ծանոթությունը բազահայտել է, որ հայկական զրույցներում թեև սակավ, բայց հանդիպում են Թովմայի Ավետարանից բանահյուսություն անցած և տեղայնացված զրույցներ:

Դրանք երկու տիպի են.

1. Հիսուսին անմիջականորեն վերաբերող զրույցներ:

2. Տեղացի նշանավոր անձնավորությանը վերագրող Հիսուսի հրաշագործության մասին պատմող զրույցներ: Այդպիսի փոխառման ցայտուն օրինակ է Գրիգոր Նարեկացու հրաշագործության զրույցը՝ տապակած աղավնիների վերակենդանացման մասին, որը հարևանման է Թովմայի Ավետարանի երկրորդ զրույցին: Կան նաև այլ զրույցներ, որոնք համահնչուն են Թովմայի Ավետարանի զրույցների ոգուն:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ինչպես Հակոբի Նախավետարանը, այնպես էլ Թովմային վերագրվող Քրիստոսի տղայության գիրքը որոշակի հետք են թողել հայ միջնադարյան զրույցներում:

## Լուսիկ Տեր-Ստեփանյան /Երևան/

### ԲՆԱԳՐԱԿԱՆ ՆՈՐ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ՀՈՎՀԱՆ ՍԱՆԴԱԿՈՒՆՈՒ ճԱՌԵՐՈՒՄ

1. Հովհան Մանդակունու «Վասն կնաթողաց» ճառը տպագիր տարբերակում անավայրտ կամ դրվագային երկի տպավորություն է թողնում: Զեռագրերում պահպանված ընդարձակ պատումը հայագետ Բ. Սարգսյանը համարել է ընդմիջարկված:

2. Ծառի ձեռագրական նոր ընդօրինակությունների բնագրական քննությունը պարզում է, որ նրանում կան Մանդակունու աշխատանոցին բնորոշ տեղիներ, որոնց ներկայությունը պատկանելության ապացույց է:

3. Ծառի բնագրում բացահայտվեց Եղիշեի Պատմության իմացություն վկայող մի հատված, որը նոր խնդիր է հարուցում:

4. Қаштәлпүң мәңгіліктердің ішінде олардың, үшіншіліктердің, дәйрәліктердің жаңы өзіншіліктердің үшінде олардың, үшіншіліктердің, дәйрәліктердің:

Николай Барабанов (Волгоград)

## НАРОДНОЕ ПРАВОСЛАВИЕ В ВИЗАНТИИ

